



The Project is funded
by the European Union

EUROEAST CULTURE
RMCB Unit

Ոչ պաշտոնական թարգմանություն

Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագիր
Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույց
(ՏՄԿԶԿ)

EuropeAid պայմանագիր թ. 2010/255-219

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՐԱՐ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

Արեւելյան Գործընկերության երկրների մշակութային քաղաքականությունների
ուսումնասիրություն եւ հետազոտություն

Այս զեկույցը պատրաստվել է Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցի (ՏՄԿԶԿ) կողմից.

Պրն. Թերի Սանդել, ՏՄԿԶԿ փորձագետ

Տկն. Սերա Պապոյան, ՏՄԿԶԿ փորձագետ

Պրն. Լուչիանո Գլուր, ՏՄԿԶԿ ղեկավար

Տկն. Տետյանա Բիլեցկա, ՏՄԿԶԿ կարողությունների զարգացման փորձագետ

Օգոստոս 2012
(թարմացված՝ հունվար 2013)

Այս զեկույցը թողարկվել է Եվրամիության աջակցությամբ: Հաշվետվության բովանդակության բացառիկ պատասխանատուն Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցն է: Այստեղ արտահայտված են մասնակից փորձագետների կարծիքները, որոնք որեւէ կերպ չեն կարող արտահայտել Եվրահանձնաժողովի տեսակետները:

ՏՄԿԶԿ ծրագիրն իրականացվում է Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH-ի գլխավորած կոնսորցիումի կողմից՝ համագործակցությամբ HYDEA S.p.A.-ի (Իտալիա) եւ RWTH Aachen University-ի (Գերմանիա):

Բովանդակություն

Հապավումների ցանկ4

Ճանաչագրություններ5

Առաջաբան6

1. Արելեյան Գործընկերության երկրների մշակութային իրավիճակի նկարագրություն9

2. Հայաստանում մշակույթի եւ մշակութային զարգացման որոշ հիմնական առանձնահատկություններ..... 13

3. Հետազոտական հարցում..... 15

3.1. Համատեքստ/Միջավայր 15

 3.1.1. Մշակույթի վրա ազդեցություն ունեցող օրենսդրություն, հարկային, գրանցման եւ զբաղվածության հիմնախնդիրներ: Որքանով են դրանք նպաստում մշակույթի եւ ստեղծարարության զարգացմանը: 15

 3.1.2. Թափանցիկություն եւ կոռուպցիա 16

 3.1.3. Պաշտոնական եւ հանրային տեղեկատվության տրամադրում եւ տարածում 17

 3.1.4. Մշակութային քաղաքականությունների ինտեգրում այլ քաղաքականությունների եւ մարտավարությունների մեջ..... 18

 3.1.5. Գործնական պատասխանատու եւ բաց վարվելակերպ 18

 3.1.6. Աջակցություն մշակույթի ոլորտին..... 19

 3.1.7. Անկախ եւ հասարակական ոլորտի դերը 20

 3.1.8. Մասնավոր եւ առեւտրային ոլորտի դերը..... 21

 3.1.9. Տեղական մամուլի, լրատվամիջոցների, ինտերնետի եւ մասնագիտական հրատարակությունների հետաքրքրությունը մշակույթի եւ մշակութային խնդիրների նկատմամբ 21

 3.1.10. Մշակույթին, դրա ապահովմանն ու մատչելիությանը վերաբերող քաղաք-գյուղ տարբերությունները 23

 3.1.11. Լեզվական խնդիրներ..... 23

3.2. Ստեղծում/արտադրություն եւ պահպանություն/վերականգնում 23

 3.2.1. Ժամանակակից մշակութային ստեղծագործության հարաբերական կարելությունը ազգային մշակութային քաղաքականության մեջ եւ գործնականում (օր.՝ ֆինանսավորման մեջ) 23

 3.2.2. Այն միջավայրի նկարագրություն, որում տեղ են գտնում մշակույթի եւ արվեստի բազմաոտեսակ ստեղծագործություններն ու արտադրությունները 24

 3.2.3. Ստեղծարարություն 25

 3.2.4. Ժառանգություն 25

 3.2.5. Վերականգնման ռեսուրսներ եւ կարողություններ 26

 3.2.6. Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան 27

3.3. Մշակույթի ապահովում/ուսումնասիրություն/մասնագիտական դասընթացներ եւ փոխանցում/տարածում/կապի հասանելիություն /թվայնացում..... 27

 3.3.1. Ընդհանուր միջավայր 27

 3.3.2. Մասնագիտական դասընթացներ..... 28

 3.3.3. Ինտերնետի օգտագործում եւ կապի հասանելիություն 28

 3.3.4. Թվայնացման նախագծեր..... 29

3.4. Հասանելիություն եւ կրթություն 30

 3.4.1. Հասանելիություն 30

 3.4.2. Կրթություն..... 30

3.5. Մասնակցություն եւ հանդիսատեսի զարգացում 32

 3.5.1. Մասնակցության վիճակագրություն 32

 3.5.2. Հանդիսատեսի զարգացում 32

Հանդիսատեսի զարգացման կամ լուսաբանող ծրագրերի վիճակագրություն, օրինակ՝ որպես թատրոնների, թանգարանների, փառատոների հիմնական գործունեության մաս, նաեւ պատկերացում այն մասին, թե որքանով է զարգացած այս երեւոյթը:..... 32

4. ՏՄԿԶԿ հետազոտական այցի հիմնական արդյունքները..... 34

Աղբյուրներ 38

Հավելված 1. Հայաստանի մշակութային քաղաքականության ՈԻԹՅԱ գնահատում տեղական շահագրգիռ կողմերի մասնակցությամբ եւ մշակույթի ոլորտի առաջնահերթ կարիքները 39

Հավելված 2. Ընդհանուր տեղեկություններ – Հայաստանը պատմության համատեքստում 40

Հապավումների ցանկ

ԱԿ	Արեւելյան Գործընկերություն
ԱԿ Երկրներ	Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովայի Հանրապետություն, Կրաստան, Ուկրաինա
ԱԿ տարածաշրջան	Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովայի Հանրապետություն, Կրաստան, Ուկրաինա
Ամփոփագիր	Եվրոպայում մշակութային քաղաքականությունների եւ միտումների եվրախորհրդի Ամփոփագիր
Անդամ պետություններ	Եվրամիության անդամ պետություններ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
Դասընթաց	Իրավիճակին/նախագծին վերաբերող ինտերակտիվ թիմային աշխատանքի վրա հիմնված կարողությունների զարգացում/դասընթաց
ԵՀ	Եվրահանձնաժողով
ԵՀԶԳ	Եվրոպական հարեւանության քաղաքականության գործիք
ԵՄ	Եվրամիություն
Ծրագիր	Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագիր
Կարիքների գնահատում 2008	Չեկույց. "Աջակցություն ԵՀԶԳ Արեւելյան տարածաշրջանի մշակութային համագործակցությանը" (պայմանագիր թիվ 2007/146264)
	Կարիքների գնահատում՝ ներկայացված ԵՄ-ին 2008-ի սեպտեմբերին
Հայաստան	Հայաստանի Հանրապետություն
ՀԴ	Հայկական դրամ (ազգային դրամական միավոր)
Հիմնարար զեկույցներ	Արեւելյան Գործընկերության վեց երկրների մշակույթի ոլորտի եւ մշակութային քաղաքականության հիմնարար վերլուծական զեկույցներ
ՀՄՄ	Հեռահաղորդակցության միջազգային միություն
ՄՀՆ	Մշակույթի (համար պատասխանատու) նախարարություն
ՄՍԻ	Մտավոր սեփականության իրավունքներ
Նախագիծ	Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույց
Սեմինար	Դասախոսությունների/ներկայացումների վրա հիմնված կարողությունների զարգացում/դասընթաց
Տարածաշրջանային հետազոտական զեկույց	Արեւելյան Գործընկերության երկրների մշակութային քաղաքականությունների եւ միտումների հետազոտական զեկույց
ՏՄԿԶԿ	Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույց
ՈԻԹՀՍ	Ուժեղ եւ թույլ կողմերը, հնարավորությունները եւ սպառնալիքները
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

Ճանապարհորդություններ

Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցը իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանում եվրամիության պատվիրակությանը եւ հատկապես գործառնական բաժնի ղեկավար պրն. Ժան-Քրիստոֆ Գայրանին, նախագծի ղեկավարներ Իրինա Մովսեսյանին եւ Ինա Յանկուլովային, ինչպես նաեւ մամուլի եւ տեղեկատվության պատասխանատու Անահիտ Ազարյանին՝ կլոր-սեղան քննարկման իրենց ակտիվ մասնակցության համար: ՏՄԿ2 կառույցը նաեւ շնորհակալություն է հայտնում Հայաստանի Մշակույթի նախարարությանը եւ անձամբ փոխնախարար տկն. Արեւ Սամուելյանին, Արտաքին կապերի վարչության ավագ մասնագետ պրն. Արտաշես Առաքելյանին՝ հետազոտական այցը պատրաստելու եւ իրականացնելու հարցում աջակցելու համար, ինչով մեկնարկեց հետազոտության եւ ուսումնասիրության գործընթացը, ինչպես նաեւ կլոր-սեղան քննարկում, աշխատանքային հանդիպումներ, հարցազրույցներ եւ այցելություններ կազմակերպելու հարցում արդյունավետ օգնության համար: Չեկույցի հեղինակները ցանկանում են առանձին նշել Մշակույթի նախարարության Արտաքին կապերի վարչության պետ տկն. Սվետլանա Սահակյանի մեծ աջակցությունը տեղեկատվության տրամադրման հարցում:

Ի վերջո, ՏՄԿ2 կառույցը շնորհակալություն է հայտնում Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի՝ տեղացի հիմնական շահագրգիռ կողմերին՝ ազգային պետական մարմիններին՝ հատկապես Մշակույթի եւ Արտաքին գործերի նախարարություններին, մասնավոր հատվածին, մասնագիտական միություններին, քաղաքացիական հասարակությանը, անկախ մշակութային գործիչներին եւ երկրում ակտիվ գործունեություն ծավալող դոնոր կազմակերպություններին՝ զեկույցի պատրաստման գործում իրենց անգնահատելի ներդրման համար:

Պրն. Արմենակ Սարգսյան, պրն. Սերժ Առաքելյան, պրն. Հակոբ Սիմոնյան, պրն. Վլադիմիր Պողոսյան, պրն. Աշոտ Հովսեփյան, տկն. Սոնա Հարությունյան, տկն. Արմինե Խաչատրյան, տկն. Անելկա Գրիգորյան, պրն. Փարավոն Միրզոյան, պրն. Կարո Վարդանյան, պրն. Կարեն Արիստակեսյան, պրն. Գագիկ Մանասյան, տկն. Արմինե Սարգսյան, տկն. Անի Ավագյան, պրն. Գագիկ Գյուրջյան, պրն. Արամ Խաբեկյան, տկն. Մարի Պատվականյան, տկն. Մարինե Հարոյան, տկն. Հռիփսիմե Պիկիչյան, տկն. Շողակաթ Գալստյան, պրն. Թեւան Պողոսյան, տկն. Սուսաննա Հարությունյան, պրն. Վրեժ Քասունի, պրն. Գեւորգ Գեւորգյան, պրն. Ռուբեն Գեւորգյանց, տկն. Շուշանիկ Միրզախանյան, պրն. Վարդան Հովհաննիսյան, պրն. Հովհաննես Թեքոյան, պրն. Գագիկ Գինոսյան, պրն. Արմեն Մազմանյան, պրն. Կարեն Աղամյան, պրն. Լեւոն Իգիթյան, պրն. Էդուարդ Բալասանյան, պրն. Գագիկ Ղազարե, տկն. Նորա Գալֆայան, պրն. Նազարեթ Կարոյան, պրն. Ռուբեն Արեւշատյան, պրն. Նարեկ Հարությունյան, տկն. Ալբրիկ Աբրահամյան, պրն. Արմեն Լիլոյան, պրն. Արա Մարգարյան, տկն. Չոյա Ստեփանյան, պրն. Քրիստիան Տեր-Ստեփանյան, տկն. Արեւիկ Սարիբեկյան, պրն. Նարեկ Թովմասյան, տկն. Վեհանուշ Փունազջյան, պրն. Սամվել Հովհաննիսյան, տկն. Լիլիթ Սմբատյան, պրն. Սամվել Կարապետյան, պրն. Գագիկ Սողոմոնյան, պրն. Միքայել Հովհաննիսյան, պրն. Դավիթ Ամիրյան, տկն. Լաուրա Գեւորգյան, տկն. Օյա Վարդանյան, տկն. Մարինե Պետրոսյան, տկն. Վիլլետ Գրիգորյան, պրն. Պետրոս Ղազարյան, պրն. Միսակ Խոստիկյան, տկն. Սուսաննա Գյուլամիրյան, պրն. Տիգրան Խզմալյան եւ շատ ուրիշներ:

Առաջաբան

Այս զեկույցը բացառապես Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցի պատասխանատվության ներքո է եւ արտահայտում է մասնակից փորձագետների կարծիքները: Այն չպետք է ընկալվի որպես եվրահանձնաժողովի տեսակետների արտահայտություն:

Այս զեկույցը նախատեսված է Արեւելյան Գործընկերության եւ եվրամիության երկրների մշակույթի ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերը ներառող լայն լսարանի համար: Չեկույցը հանդիսանում է Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցի կողմից 2011 թվականի հոկտեմբերից մինչեւ 2012-ի մարտն ընկած ժամանակահատվածում ԱԳ վեց երկրներում՝ Ադրբեջանում, Բելառուսում, Հայաստանում, Մոլդովայում, Վրաստանում եւ Ուկրաինայում իրականացված *Արեւելյան Գործընկերության երկրների Մշակութային քաղաքականությունների ուսումնասիրության եւ հետազոտության* արդյունք: Ուսումնասիրությունները կենտրոնացվել են նշված երկրների՝ Ադրբեջանի, Բելառուսի, Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի եւ Ուկրաինայի ազգային մշակութային քաղաքականությունների վրա եւ գործնականում կոչված են ապահովելու ռազմավարական ուղղորդում Արեւելյան Գործընկերության Մշակութային ամբողջ ծրագրի եւ Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցի (ՏՄԿԶԿ) ողջ գործունեության համար:

Հետազոտության արդյունքները ներկայացվել են որպես “համալիր զեկույց” բաղկացած հետեւյալ մասերից.

- *Մշակույթի ոլորտի եւ մշակութային քաղաքականության հիմնարար վերլուծական զեկույցներ*՝ վեց երկրներից յուրաքանչյուրի համար առանձին,
- *Արեւելյան Գործընկերության երկրների մշակութային քաղաքականությունների եւ միտումների տարածաշրջանային հետազոտական զեկույց*, որը ներառում է բոլոր վեց երկրները եւ բացահայտում է գործընկեր երկրների մշակութային տիրույթների՝ բարեփոխման ենթակա առաջնահերթ ոլորտները մինչեւ 2015 թվականի մարտն ընկած ժամանակահատվածի համար:

ՏՄԿԶԿ-ի մշակած երկրների Հիմնարար զեկույցները ենթակա են հետագա վերլուծության, քննարկումների եւ փոփոխման: Արտահայտելով յուրաքանչյուր երկրի մշակութային դաշտի ներկա իրավիճակը՝ վեց Հիմնարար զեկույցները կնպաստեն ընդհանուր ԱԳ Մշակութային ծրագրի հետագա զարգացումներին եւ առաջխաղացմանը հետեւելու գործին: Այս զեկույցները նախեսառաջ հիմնված են երկրների յուրատեսակ քաղաքականությունների եւ փորձառության վերլուծության վրա՝ համեմատած միջազգային լավագույն փորձի եւ չափանիշների հետ: Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի ընթացքում մենք կրկին կօգտագործենք միեւնույն ցուցիչները՝ գնահատելու համար մշակույթի բնագավառում տեղ գտնող զարգացումները եւ փոփոխությունները: Մենք հույս ունենք, որ այս ցուցիչներն ու երկրների զեկույցները կարժեւորվեն նաեւ Արեւելյան Գործընկերության երկրների իշխանությունների կողմից՝ որպես իրենց ազգային մշակութային իրավիճակում կատարվող փոփոխությունների գնահատման գործիք:

Վեց հիմնարար զեկույցները նախագծման փուլում տրամադրվել են ազգային իշխանություններին եւ ԱԳ երկրների այլ շահառուներին, իսկ Տարածաշրջանային զեկույցի հիմնական եզրակացությունները ներկայացվել են 2012-ի սեպտեմբերին Բրյուսելում կայացած Արեւելյան Գործընկերության մշակութային քաղաքականության փորձագետների սեմինարի (4-րդ հարթակ), ինչպես նաեւ 2012-ի հոկտեմբերին Վրաստանում՝ Թբիլիսիում կայացած Արեւելյան գործընկերության մշակութային ծրագրի Տարածաշրջանային առաջին համաժողովի ժամանակ: Ազգային իշխանություններին առաջարկվել է մեկնաբանել կամ աջակցել լրացուցիչ տեղեկատվությամբ: Հիմնարար զեկույցներից մի քանիսը թարմացվել են՝ հիմնվելով 2012-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ազգային իշխանությունների կողմից տրամադրված տեղեկատվության վրա:

Վեց Հիմնարար գեկույցները՝ անգլերեն և ազգային լեզուներով, և Տարածաշրջանային հետազոտական գեկույցը՝ անգլերեն և ռուսերեն, Էլեկտրոնային տեսքով հրապարակված են Ծրագրի կայքում (www.euroeastculture.eu)՝ ներառելով ՏՄԿԶԿ-ին ուղղված ազգային պետական կառույցների տեղեկատվությունը: Մշակույթով հետաքրքրված բոլոր շահագրգիռ կողմերին առաջարկվում է Ծրագրի կայքը օգտագործել որպես երկխոսության հարթակ և աջակցել հետազոտությունների վերաբերյալ իրենց կարծիքներով:

Զգացվում էր, որ ավանդական մշակութային դաշտը դասակարգելը՝ օրինակ ենթաբնագավառների, ամենահարմար դիրքորոշումը չի լինի ԱԳ Ծրագրի դեպքում, որտեղ գործնական մոտեցում է անհրաժեշտ արդյունքների նկատմամբ: Այդ արդյունքները առնչվելու են իրենց իսկ ազդեցությանը այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են ժողովրդավարացումը, արդիականացումը և բարեփոխումները ԱԳ կոնկրետ երկրում ավելի շատ, քան մշակույթի կամ արվեստի ճյուղերի առնչությամբ, այդ պատճառով հետազոտությունը կենտրոնացվել է հետևյալ հինգ ուղղություններով.

- յուրաքանչյուր երկրի մշակույթի համատեքստը/կլիման, ծստեղծումը և արտադրությունը,
- ստեղծումը և արտադրությունը,
- մշակույթի ապահովումը, փոխանցումը և տարածումը,
- մշակույթի հասանելիությանը վերաբերող խնդիրները,
- մշակութային մասնակցությունը:

Այս դասակարգման մեջ ենթադրվում է երկու հարց՝ ժողովրդավարացումը և արդիականացումը. արդյո՞ք գոյություն ունի բարենպաստ միջավայր մշակույթի և մշակութային արտադրության համար, որքա՞ն «բաց» է մշակութային համակարգը, որքա՞նով են պետություններն ի վիճակի եղել օգուտ քաղել մշակույթի վրա ազդող ներկայիս հեղափոխական զարգացումներից՝ այդ թվում թվայնացումից, ինտերնետից և մշակույթի «սպառման» առնչվող փոփոխություններից, ինչպե՞ս են համակարգի շրջանակներում միմյանց հետ հարաբերվում մշակույթ արտադրողներն ու սպառողները, և վերջապես բոլոր այս տարրերի լույսի ներքո որո՞նք կարող են լինել զարգացմանը, կարողությունների ստեղծմանն ու վերապատրաստմանն առնչվող կարիքները:

Եվրամիության տարածաշրջանային քաղաքականության համատեքստի և մասնակից երկրներում իշխող ու Արևելյան Գործընկերության Մշակութային Ծրագրին առնչվող ներկայիս միտումների, ինչպես նաև հետազոտության մեջ կիրառված վերլուծական չափանիշների, մշակութային քաղաքականություններին առնչվող եվրոպական և միջազգային չափանիշների աղբյուրների և հետազոտության հիմնական տարրերի ու աշխատանքային գործընթացների մեթոդաբանության մասին ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է գտնել Տարածաշրջանային հետազոտական գեկույցում:

Ուսումնասիրությունը մեկնարկել է 2011-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Տարածաշրջանային մոնիթորինգի և կարողությունների զարգացման կառույցի՝ դեպի Արևելյան Գործընկերության երկրներ իրականացրած վեց հետազոտական այցերով: Հայաստան կատարած այցի արդյունքները ներկայացված են սույն գեկույցի 4-րդ բաժնում: Հարկ է նշել, որ *Հետազոտական հարցումը* (3-րդ բաժին) ներկայացնում է մշակութային դաշտի ընդհանուր իրավիճակը ազգային մակարդակում և ԱԳ տարածաշրջանային համատեքստում՝ հիմնվելով միջազգային չափանիշների հետ համեմատության վրա, իսկ *Հայաստան կատարած հետազոտական այցի հիմնական արդյունքների վերաբերյալ* ՏՄԿԶԿ-ի վերլուծական ամփոփումը (5-րդ բաժին) և հատկապես *Հայաստանի մշակութային քաղաքականության ՈԻԹՅՍ գնահատումը տեղացի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ/Մշակույթի ոլորտի առաջնահերթ կարիքները* (Հավելված 1) արտահայտում են Ծրագրի՝ տեղացի ամենատարբեր դերակատարների տեսլականը:

Քանի որ *Հայաստանի մշակութային քաղաքականության ՈԻԹՅՍ գնահատում տեղական շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և մշակույթի ոլորտի առաջնահերթ կարիքները* վերնագրված հարցմանը

պատասխանողների թիվը բավարար չէր վերլուծական հետազոտության գիտականորեն վստահելի հիմք ծառայելու համար, ՈԻԹՅՍ գնահատման արդյունքները կցված են զեկույցին միայն տեղեկատվական նպատակներով: Այդուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ ՈԻԹՅՍ գնահատման արդյունքները համահունչ են վերլուծության եզրակացություններին:

Երկրների մասին ՏՄԿԶ-ի մշակած զեկույցները, որ արտահայտում են ՏՄԿԶ-ի փորձագետների տեսակետները վեց երկրների մշակութային դաշտի իրավիճակների վերաբերյալ, ենթակա են հետագա վերլուծության, քննարկման եւ փոփոխության: Ազգային իշխանություններին առաջարկվելու է մեկնաբանել կամ աջակցել լրացուցիչ տեղեկատվությամբ: Վեց Հիմնարար զեկույցները՝ անգլերեն եւ ազգային լեզուներով, եւ Տարածաշրջանային հետազոտական զեկույցը՝ անգլերեն եւ ռուսերեն, համապատասխան ազգային պետական կառույցներից ստացված տեղեկատվության հետ միասին էլեկտրոնային տեսքով հրապարակվելու են Ծրագրի կայքում (www.euroeastculture.eu): Մշակույթով հետաքրքրված տեղացի բոլոր շահագրգիռ կողմերին առաջարկվելու է հետազոտությունների վերաբերյալ իրենց կարծիքները հայտնել Ծրագրի կայքում՝ որպես երկխոսության հարթակ:

Բաժին 3: Չեկույցների *Հետազոտական հարցում* բաժինը նպատակ ունի ամփոփել փաստացի վկայությունների եւ տպագիր աղբյուրների վրա հիմնված արդյունքները: Բաժնի մեջ նախատեսված հարցերը ոչ միշտ են սպառիչ պատասխաններ գտել, այդուամենայնիվ, պահպանելու համար բոլոր վեց հետազոտությունների գնահատման գործիքների կապակցվածությունը՝ որոշեցինք անփոփոխ թողնել հարցման այդ հատվածները: Որտեղ բացակայում է տեղեկություն եւ վկայություն, զեկույցներում որպես կանոն նշվում է “Որեւէ տվյալ/տեղեկատվություն չի գտնվել”, իսկ երբեմն նույնիսկ անհրաժեշտ է եղել գնահատումներ կիրառել: Նման դեպքերը նվազագույնն են եղել: Որոշ դեպքերում, երբ տեղեկատվության ձեռքբերումը հնարավոր չի եղել հետազոտության սահմանված ժամկետներում, նշվում է “Որեւէ տվյալ/տեղեկատվություն չի հավաքվել”: Սպասվում է եւ հույս կա, որ ապագայում համապատասխան տեղեկատվության հասանելիությունը կբարելավվի եւ ավելի հեշտ կլինի:

Այս հետազոտությունը ղեկավարել են ՏՄԿԶ-ի ղեկավար պրն. Լուչիանո Գլուրը եւ ՏՄԿԶ-ի կարողությունների զարգացման փորձագետ տկն. Տեոյանա Բիլեցկան: Տկն. Տ. Բիլեցկան պատասխանատու էր նաեւ ուսումնասիրության եւ հետազոտության բոլոր փուլերի գործնական իրականացման՝ այդ թվում գործընկեր երկրներ կատարած հետազոտական այցերի արդյունքները հավաքելու եւ վերլուծելու, ինչպես նաեւ յոթ զեկույցների վերջնական համախմբման եւ խմբագրման համար:

ՏՄԿԶ-ի փորձագետ պրն. Թերի Սանդելն իրականացրել է ուսումնասիրության մեթոդական ղեկավարումը՝ այդ թվում մշակելով մասնակից երկրների մշակութային իրավիճակները վերլուծելու համակարգ, դրա վերլուծական կատեգորիաները եւ ցուցիչները, ինչպես նաեւ մշակել է երկրների զեկույցների վերլուծական հետազոտության կառուցվածքը, ուղղորդել է այլ փորձագետներին եւ խմբագրել ու նախնական տեսքի բերել զեկույցների 1-3 բաժինները եւ Հավելված 2-ը: :

ՏՄԿԶ-ի փորձագետ տկն. Սեդա Պապոյանը պատասխանատու էր 3-րդ բաժնում ներկայացված վերլուծական հետազոտական հարցումը պատրաստելու համար՝ ներառյալ նկարագրական եւ վիճակագրական տվյալների հավաքումը եւ չափանիշների վերլուծական համեմատությունը:

Չեկույցի, դրա մեթոդաբանության եւ կատարված աշխատանքի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվության համար դիմել ՏՄԿԶ-ի կարողությունների զարգացման փորձագետ տկն. Տեոյանա Բիլեցկային՝ tetiana.biletska@euroeastculture.eu, կամ ՏՄԿԶ-ի ղեկավար պրն. Լուչիանո Գլուրին՝ luciano.gloor@euroeastculture.eu:

1. Արեւելյան Գործընկերության երկրների մշակութային իրավիճակի նկարագրություն

Մշակվել է առանձին տարածաշրջանային զեկուլյց, որը որպես այս զեկուլյցի լրացում՝ ներկայացնում է յուրաքանչյուր երկիր ընդհանուր համատեքստում եւ ընդգծում է Արեւելյան Գործընկերության տարածաշրջանի ընդհանուր միտումներն ու խնդիրները: Այդուամենայնիվ այստեղ օգտակար կլինի անդրադառնալ որոշակի համատեքստի՝ ցույց տալով, թե որն էր հայաստանյան հետազոտության եւ ընտրված մոտեցման նպատակը:

Անկախացումից հետո Արեւելյան Գործընկերության վեց երկրները ստիպված էին դիմակայել բազում մարտահրավերների եւ խնդիրների: Ինչպես շատ եվրոպական երկրներում թեեւ մշակույթը կարեւորվում է, բայց քաղաքական իրողությունները մշակույթը ֆինանսավորելու առաջնահերթություն չեն դնում: Այս երկրներում՝ այդ թվում եւ Հայաստանում, որն իր մշակույթն ու մշակութային ինքնությունը պահպանել է հազար եւ ավելի տարիներ, մշակութային դաշտն ավելի հաճախ եղել է հուսահատ, կարճատեւ պայքարների մեջ հանուն գոյատեւման, քան կկարողանար մշակել մտացածին հեռագնա նախագծեր: Եվ բնական ընթացքը եղել է անցյալի վրա հենվելը՝ պահպանելով ինչը հնարավոր է, ձգտելով աշխատացնել միակ տեղին համարվող (նաեւ ծանոթ) համակարգերն ու գործընթացները, եւ պարզապես զիջել այն հույսով, որ մի օր ամեն ինչ ավելի լավ կլինի: Հարցն այն է, որ ոչ այնքան “ավելի լավն է այլընտրանք եղել լավի համար”, այլ “վատն առնվազն ավելի լավ է եղել, քան ամենավատը”: Ստատուս քվոն եղել է ավելի քիչ վտանգավոր, քան անհայտը:

Այդուամենայնիվ, Հայաստանի համար, ի տարբերություն մյուս երկրների (գուցե որոշ զուգահեռներով Ուկրաինայի հետ), իր Սփյուռքի դերը մշտապես շատ կարեւոր է եղել մշակույթի պահպանության եւ զարգացման գործում: Հայկական մշակույթի պարագայում գոյությունի ունի հիմնական տարածքից դուրս շրջանակ, որտեղ Սփյուռքի կարեւորությունն իսկապես հսկայական է, եւ խոսքը միայն ֆինանսական աջակցության մասին չէ՝ ուղղված, օրինակ, երեւանյան մշակութային ենթակառուցվածքների վերանորոգմանը: Ունենալով ըստ էության փոքր միատարր մշակույթով հասարակություն՝ Սփյուռքի կոսմոպոլիտիզմը ու ավելի լայն աշխարհայացքը նույնպես կարեւոր է, նույնիսկ եթե այն ուղղված է հիմնականում Հայաստանի ազգային շահերին եւ ինքնության հարցերին:

Ընդհանրապես մշակույթը չի զարգանում անօդ տարածության մեջ, իսկ Արեւելյան Գործընկերության երկրներում, անկախ վերը նշված տնտեսական եւ ֆինանսավորման կողմերից, միջավայրը հիմնականում չի նպաստել դրական զարգացումներին կամ տեղաշարժերին: Ժառանգված քաղաքական խնդիրներն ու մարտահրավերները, որոնք անմիջապես ազդում են մշակույթի վրա, ինչպիսիք են խորհրդային ժառանգությունն հանդիսացող լեզվական, ժողովրդագրական, տարածքային եւ էթնիկ քաղաքականությունները, մեծապես աղավաղել են եւ պատնեշներ են ստեղծել տարածաշրջանում մշակույթի խաղաղ ու կայուն զարգացման համար: Հայաստանի պարագայում այս ամենին գումարվեց 1988 թվականի ավերիչ երկրաշարժը, որի հետեւանքները մնացին դեպքից ավելի քան տասնամյակ անց, իհարկե նաեւ էթնիկ պատերազմը Ադրբեջանի հետ, որը փաստացի հանգեցրեց Ադրբեջանից հայերի եւ Հայաստանից Ադրբեջանցիների մաքրմանը, ինչպես նաեւ Հայաստանի շրջափակմանը Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից եւ շարունակ անլուծելի, քայքայող տարածքային եւ քաղաքական վեճին Ադրբեջանի հետ: Քաղաքական, տնտեսական եւ ֆինանսական խնդիրներով հանդերձ, իհարկե եղել են նաեւ դրական փոփոխություններ եւ զարգացումներ:

Այլ երկրների նման Հայաստանում եղել են այլ անհամար մարտահրավերներ՝ այդ թվում հասարակությունն ու դրա արժեքային համակարգը թունավորող կոռուպցիան, անկայունությունը, երբեմն նաեւ ապագայի հանդեպ վստահության կորուստը: Մի քանի այլ երկրների նման Հայաստանից մարդկանց հսկայական արտագաղթ տեղի ունեցավ: Հաշվարկները տարբեր են, բայց մինչեւ մեկ միլիոնը սխալ թիվ չի լինի, ինչը, հաշվի առնելով Հայաստանի չափերը, վիթխարի հոսք է:

Այս պայմաններում Մշակույթի նախարար կամ մշակույթի եւ ժառանգության պառլամենտական հանձնաժողովի ղեկավար կամ մշակույթի գծով նախագահի խորհրդական լինելը հավանաբար նույնքան ծանր է եղել, որքան պայքարող արվեստագետ, թանգարանային համադրող կամ գրադարանավար լինելը:

Թեեւ վերջին շրջանում, երբ մշակույթը, մշակութային քաղաքականությունն ու զարգացումը մտահոգության են արժանանում, որոշ կանաչ ծիւղեր են նկատվում տարածաշրջանում, այն դեպքում երբ հետադարձ հայացքով հնարավոր է տեսնել, որ փաստացի առաջխաղացում գրանցվել է, թեւ ոչ այնքան մեծ եւ արագ, որքան բոլորը կցանկանային:

Հատկապես վերջին տասնամյակում կարելի է տեսնել, թե ինչպես են, օրինակ, երկրները ճանապարհ բացում դեպի իրենց նոր պետականությանը համապատասխանող միջազգային չափանիշներ այն ժամանակ, երբ մասնավորապես երիտասարդները սկսում են ճանաչել արդիականացման առավելությունները, ներկայումս ծավալվող հաղորդակցային եւ թվային հեղափոխությունների նոր, հետաքրքիր հնարավորությունները, ինտերնացիոնալիզմը եւ գլոբալիզացիան, բազմաթիվ ինքնությունների բացահայտումը եւ անձնական ինքնակիրառությունը, ժամանակակից սահմանամերձ՝ մշակույթի եւ ստեղծարարության դերն ու ավանդը սոցիալական, տնտեսական եւ հումանիտար օրակարգերում եւ ազգային, տարածաշրջանային եւ անձնական զարգացման գործում: Սփյուռքի շնորհիվ Հայաստանի ունեցած բացառիկ միջազգային կապերը նույնպես աճող հնարավորություններ են ստեղծել:

Արդիականացմանը, նոր չափանիշներին եւ միջազգային ներգրավվածությանը տանող հայկական ճանապարհը ներառում է 1992-ին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին, եւ 2001-ին Եվրախորհրդին միանալը: Հայաստանն ակտիվ է եղել մշակույթին վերաբերող միջազգային կոնվենցիաներ վավերացնելու գործում, որոնց թվում են.

- Զինված կոնֆլիկտների դեպքում մշակութային արժեքների պահպանության Հաագայի Կոնվենցիա
- Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիա
- Մշակույթի եւ բնության համաշխարհային ժառանգության պահպանության մասին կոնվենցիա
- Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պահպանության եւ խրախուսման կոնվենցիա
- Եվրոպական մշակութային կոնվենցիա
- Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիա
- Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանության մասին կոնվենցիա
- Կինեմատոգրաֆիական համատեղ արտադրության եվրոպական կոնվենցիա
- Համաձայնագիր կրթական, գիտական եւ մշակութային նյութերի ներկրման մասին

Ամենաթարմ փուլը ներգրավվածությունն է Արեւելյան Գործընկերության մշակութային ծրագրում, որը հավասարաչափ կարելու է իրագործելի է ինչպես Եվրամիության եւ դրա անդամ երկրների, այնպես էլ Հայաստանի եւ Արեւելյան Գործընկերության մյուս երկրների համար՝ միասին եւ առանձին-առանձին: Այս ներգրավվածությունը ճիշտ ժամանակին է, քանի որ մշակույթի ոլորտում Հայաստանն ու մյուս գործընկեր երկրները սկսում են տեսնել թունելի վերջում առկայծող առասպելական լույսը, եւ ի հայտ են գալիս կանաչ ծիւղեր, չնայած վիթխարի մարտահրավերներ են առկա ինչպես մշակութային դաշտում, այնպես էլ ընդհանուր քաղաքական եւ տնտեսական միջավայրում, որտեղ մշակույթը իրագործվում, գոյատևում եւ բարգավաճում է: Այդուհանդերձ ակնհայտ է Ադրբեջանի հետ ունեցած շարունակական կոնֆլիկտի խեղաթյուրող ազդեցությունը տարածաշրջանային համագործակցության վրա:

Հայաստանում տեղ գտնող որոշ կանաչ ծիւղերի շարքում են Սփյուռքի հետ կապերի, դրա ռեսուրսների ու հովանավորության ավելի ու ավելի արդյունավետ օգտագործումը, որ արտահայտվում է, օրինակ,

Երեւանի մշակութային ենթակառուցվածքները վերականգնելու մեջ: Ավելի աշխարհիկ մակարդակում տեղաշարժերի հայտ եկան նաեւ մշակույթի նախարարության ներսում բյուջետավորման նոր ձեւերի փորձարկման շնորհիվ: Այլ դրական նվաճումներից են Ոսկե Ծիրան միջազգային նորարար կինոփառատոնի եւ դրան հարող նախաձեռնությունների ամրապնդումը, ինչպէս նաեւ շատ հաջողակ ՀայՖէստ միջազգային կատարողական արվեստների փառատոնը: Երկուսն էլ իրենց ծագման եւ զարգացման համար պարտական են անկախ ուժերին, թեւէ նրանց նվաճումները կախված են նաեւ ստացված պետական աջակցությունից: Այդ տեղաշարժերը թեւէ բացառապէս հայկական են, սակայն արժանի են ավելի մեծ հետաքրքրության եւ տարածաշրջանում ավելի լայն կիրառելիության: Հույս կա, որ այս հետազոտությունը եւ ողջ Արեւելյան Գործընկերության մշակութային ծրագիրը կկարողանան Հայաստանի եւ մյուս հինգ երկրների դրական փորձառությունն այնպէս ուղղորդել, որ հեշտանա տարածաշրջանային եւ ընդհանուր եվրոպական ներգավաճությունը՝ բազմակողմանի, երկկողմանի ինչպէս նաեւ անհատական նախաձեռնությունների մակարդակներում:

Սա փաստորէն ուշադրություն է հրավիրում կիրառված մեթոդաբանության եւ այն հարցի վրա, թե որն է այս հետազոտության նպատակը: Երբ խոսքը մշակույթի եւ մշակութային զարգացումների մասին է, կանաչ ծիւերը, հողամշակումը, գաղափարներ տնկելը, սերմեր ցանելը ավելին են, քան պարզապէս համապատասխան այգեգործական փոխաբերություններ: Իրականում մշակութային եւ այգեգործական տերմինները հեշտությամբ եւ ուղիղ թարգմանում են մեկը մյուսին. «մշակույթ» եւ «կուլտուրաներ», բազմազանություն (կենսա/մշակութային), «միջավայր», օրգանական աճ, «պարարտ հող», «խաչասերում», նույնիսկ «Էտոմ»: Հետազոտական հարցումը անուղակիորէն կիրառում է այգեգործական փոխաբերությունները՝ ուսումնասիրելու համար այն միջավայրը, որում աճեցվում է մշակույթը նշված երկրներում եւ ընդհանուր տարածաշրջանում: Հետազոտությունը նպատակ ունի բացահայտել այն գործոնների հիմնապատճառը, որոնք արգելակում են մշակութային զարգացումը՝ չվերաբերելով մշտական խնդիր համարվող ֆինանսավորմանը:

Այլ կերպ ասած՝ կարելու բարեփոխումներ միշտ հնարավոր է կատարել, եւ դրանք ոչ միշտ են կախված բյուջէներից, այլ ավելի հաճախ պահանջում են գիտելիք, առաջնորդություն, համակարգի բարեփոխում, փորձարկում կամ թարմ մոտեցումներ: Թանգարանների կամ գրադարանների նման հաստատություններում արդիականացման կոնկրետ կողմեր կարող են համարվել, օրինակ, այցելուների սպասարկման որակը բարձրացնելու ուղղված քայլերը, որոնք կախված են ոչ այնքան բյուջէից, որքան անձնակազմի մոտեցումներից եւ ընկալումներից:

Կարիք չկա անկկալել, որ որեւէ պետություն՝ ո՛չ երիտասարդ, ո՛չ ծեր, ո՛չ վաղ անկախության եւ հասունացող պատանեկության շրջանում գտնվող Արեւելյան Գործընկերության երկրները, ո՛չ էլ արդէն հասուն եւ նույնիսկ ծեր ԵՄ անդամ երկրները տնտեսական ու ֆինանսական հեղաշրջման այս ժամանակներում, կարողանա երաշխավորել մշտապէս աճող բյուջէ մշակույթի համար, աջակցություն յուրաքանչյուր արվեստագետի կամ արժեքավոր մշակութային նախաձեռնությանը, նույնիսկ չի կարող ամբողջությամբ հասկանալ իր հասարակության ստեղծարարությունն ու մշակութային բարոյությունը: Այն, ինչ իսկապէս կարելի է սպասել եվրոպական ինքնությունն արժեւորող բոլոր երկրներից, եւ դա էլ հետազոտության էությունն ու ուղղակի ակնկալիքն է ապագայից, որ 19-րդ դարի լավ գյուղացու նման՝ ֆրանսիացի, գերմանացի, հայ թե մեկ այլ ազգի, իմանան ինչպէս աճեցնել: Որ երբ խոսքը մշակույթի ու մշակութային զարգացման մասին է, իմանան հաշվի ստեղծ միջավայրի հետ, ինչ քայլեր ձեռնարկել եղանակի առնչությամբ, ինչպէս աճեցնել, բայց ոչ անտեղի միջամտել, ինչպէս վարվել «մոլախոտերի» հետ, որոնք իսկապէս սպառնում են ճնշել առողջ աճն ու առանձին բույսերին: Խելամտորէն կարելի է սպասել, որ նրանք կջրեն այգին՝ առավելագույնս օգտվելով անձրեւից, ինչպէս նաեւ պաշար կհավաքեն երաշտի համար: Վերջիվերջո՝ ներգրավելով պետական եւ տեղական իշխանությունները, անկախ եւ մասնավոր ոլորտները՝ օգնելով բոլորին մուտք ունենալ եւ վայելել «այգին»:

Այս առումով հարուստ թե աղքատ, մեծ թե փոքր կառավարությունների մարտավարությունը պետք է լինի հանդես գալ որպէս մշակույթի «աճեցնող» եւ «աջակցող»: Այս եղանակով չափելու դեպքում հնարավոր է ստանալ ավելի հարթ «խաղաղաշտ», որտեղ իրական նվաճումներ եւ

համեմատություններ գրանցել ողջ Եվրոպայի մասշտաբով, եւ դրանք կախված չեն լինի միան ՅՆԱ-ից կամ մշակույթին հատկացված բյուջեից: Պետական իշխանության առումով հստակ կարելի է ամփոփել անգլերենի մի մանրուքով, որ սահմանում է, ոչ թե մշակույթի նախարարություն, այլ նախարարություն մշակույթի *համայնք*:

Հետազոտական հարցումն ու դրան առնչվող աշխատանքը նպատակ ունի նաեւ բացահայտել հատկապես այն կարիքները, որոնք կարող են վերաբերել Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագրի զարգացմանը եւ Տարածաշրջանային մոնիթորինգի եւ կարողությունների զարգացման կառույցի գործունեությանը:

Որոշակի թեմաներ եւ կարիքներ ծագում են հենց հետազոտությունից, այդ թվում.

- (i) բացահայտել, թե որոնք կարող են լինել “կանաչ ծիւերը” եւ ինչպես աջակցել այդ անհատներին, խմբերին ու կազմակերպություններին
- (ii) սահմանել, թե ինչպիսի առաջնորդության կարիք կլինի մշակույթի ոլորտի բոլոր մակարդակներում
- (iii) ընդգծել մշակութային քաղաքականությանն ու մարտավարություններին անհրաժեշտ տարրերը, որոնք կարողիականացնեն մշակույթը, մշակութային քաղաքականությունն ու գործունեությունը՝ թույլ տալով, որ դրանք դիսամիկ կերպով նսպատեն սոցիալ-տնտեսական քաղաքականություններին ու օրակարգերին
- (iv) հեշտացնել մշակույթի հասանելիությունը, հաղթահարել ջրբաժանները, ինչպիսիք են քաղաքն ու գյուղը, ինչպես նաեւ մշակույթը համապատասխանեցնել հատկապես երիտասարդների ժամանակակից արժեքներին ու ձգտումներին
- (v) հավասարակշռել անցյալի պահպանությանն ու ապագայի ստեղծարարությանն ուղղված աջակցությունները
- (vi) ընկալել հաղորդակցության եւ նոր տեխնոլոգիաների ներուժն ու հեղափոխական ազդեցությունը հասանելիության, մշակույթի սպառման, մշակութային ինքնության եւ անձնական ինքնակիրառելիության գործում
- (vii) հաշվի առնել եւ առավելագույնի հասցնել մշակութային գործիչների գործակցությունը պետական, տարածաշրջանային, քաղաքային, տեղական, մասնավոր եւ անկախ/հասարակական ինչպես նաեւ գործնական եւ քաղաքականության մակարդակներում այնպես, որ մշակույթին հասանելի բոլոր ռեսուրսները արդյունավետ օգտագործվեն
- (viii) կիսել գիտելիքն ու փորձը այս բազմազան ու շփոթեցնող աշխարհում, որտեղ միջոցները փոխվել են հեղափոխության աստիճանի, բայց մարդիկ հավանաբար այդքան արագ չեն փոխվում իրենց ձգտումների, սահմանափակումների եւ վախերի առումով:

Հետազոտության մի մասում փորձ է արվել համեմատել տարբեր երկրների փորձառությունը դրական եւ չեզոք մոտեցմամբ՝ ձգտելով չվերածել “գեղեցկության մրցույթի”: Հետազոտական հարցումը նախատեսում է բացահայտել եւ արագ “ախտորոշման” ենթարկել վեց երկրների մոտեցումները մշակույթի, մշակութային քաղաքականության եւ զարգացումների վերաբերյալ, ինչպես նաեւ պարզել օբյեկտիվորեն եւ սուբյեկտիվորեն գնահատված նրանց ապագա հավանական կարիքները: Այս հիմքի վրա հույս կա, որ ավելի իմաստալից եւ արժեւորված համագործակցություն կզարգանա ԵՄ-ի, դրա անդամ պետությունների եւ Արեւելյան Գործընկերության երկրների միջեւ:

Պետք է նշել նաեւ, որ զեկույցը չի անդրադառնում Լեռնային Ղարաբաղին:

2. Հայաստանում մշակույթի եւ մշակութային զարգացման որոշ հիմնական առանձնահատկություններ

Ինչպես բոլոր Արեւելյան Գործընկերության երկրներում անկախացումից հետո՝ եւ մեծամասամբ մինչեւ հիմա, մշակույթի ոլորտում կառավարության հիմնական քաղաքականությունը եղել է պարզապես գոյատևումը՝ համատեղված ժառանգության նկատմամբ հատուկ ուշադրությամբ՝ որպես ազգի ձեւավորման եւ ազգային ինքնության քաղաքականության մի մաս, խորհրդային շրջանից ժառանգված ազգային ինստիտուտների ենթակառուցվածքի պահանմամբ: Այս ամենն իհարկե ուղեկցվում էր հասարակական մեծ փոփոխություններով՝ այդ թվում գաղափարական գրաքննության վերացմամբ, խոսքի ազատությամբ եւ մշակութային օրենսդրության մշակմամբ ու զարգացմամբ՝ հիմնականում հետեւելով եվրոպական օրինակներին:

Խնդիրն այն է, որ այս ամենը չէր ուղեկցվում գործնական բարեփոխմամբ, իսկ “պահպանությունը” հաճախ ենթադրում էր “քարացում”, եւ մշակութային քաղաքականության, ծրագրավորման, կառավարման ու ֆինանսավորման համակարգը պարզապես չէր համապատասխանում այն նոր հանգամանքներին, որոնցում Հայաստանը եւ մյուս երկրները հայտնվել էին: Նույնիսկ ձեռնարկվող դրական քայլերը ձախողում էին որեւէ իրական ազդեցություն ունենալ, քանի որ կատարում էին միայն մակերեսային փոփոխություններ՝ առանց հասնելու իրական խորքային խնդիրներին: Սրա վառ օրինակն է մշակույթին վերաբերող օրենսդրությունը: Օրենքները, որպես այդպիսին, լավ մշակված էին, բայց չգործող համակարգերի պատճառով ավելի հաճախ պարզապես հանդես էին գալիս որպես չքննարկված փաստաթղթեր՝ առանց որեւէ գործնական կիրառության: Երբ որեւէ տեղաշարժ էր գրանցվում բարեփոխման ուղղությամբ, այն կամ անվճռական էր լինում կամ ավարտին չէր հասցվում՝ դառնալով “կիսաբարեփոխում”:

Հայաստանի դեպքում անկախացմանը հաջորդող շրջանում մեծ էր ներքին քաղաքական իրարանցումը, ինչպես նաեւ վնաս հասնցնող արտաքին դիվերսիաները, ինչպիսին է շարունակական կոնֆլիկտը Ադրբեջանի հետ: Սա նշանակում է, որ նշված ձգտումների որոշ մասը՝ այդ թվում եւ մշակույթի բնագավառում, մնում էր թղթի վրա: Մշակութային քաղաքականությունը շարունակում է կենտրոնացված մնալ, թեեւ 1995-ին Սահմանադրության ընդունումից հետո ապակենտրոնացումը համարվեց առաջնահերթություն: Ընդհանրապես հսկայական է մշակութային ապահովման եւ հնարավորությունների անջրպետը կենտրոն երեւանի եւ որեւէ այլ վայրի՝ անգամ երկրորդ քաղաք Գյումրիի միջեւ: Երեւանի եւ գյուղական վայրերի միջեւ անջրպետը վիթխարի է, չնայած համակարգիչների եւ բջջային հեռախոսների աճող հասանելիությունը, հնարավոր է, կարողանա կրճատել այն որոշ, թեկուզեւ սահմանափակ եղանակներով: Ապակենտրոնացման եւ մշակութային ռեսուրսների ու հնարավորությունների հավասարաչափ բաշխման խնդիրը միայն կենտրոնից չէ. տարածքային իշխանությունների՝ մշակութային նախագծեր իրագործելու կարողությունը նույնպես խնդիր է: Այս առումով Հայաստանը բացառություն չէ Արեւելյան Գործընկերության երկրների շարքում:

Մշակույթի բնագավառին վերաբերող հիմնական օրենսդրությունը 2002-ի օրենքն է Մշակութային օրենսդրության հիմունքների մասին, որն ընդհանուր առմամբ ընդգծում է այն հիմնական չափանիշները, որոնցով անհրաժեշտ է բարձրացնել իրազեկության մակարդակը մշակույթի շուրջ՝ որպես զարգացման միջոց, տարածել նոր արժեքներ եւ գաղափարներ, ապահովել ժամանց եւ խթան հանդիսանալ մարդկանց ստեղծագործ ներուժի իրագործման եւ քաղաքացիական հասարակության ամրապնդման համար:

Արեւելյան Գործընկերության բոլոր երկրներում պետական համակարգերի կողմից խնդիր կար մշակույթի՝ 19-րդ դարի եւ խորհրդային նեղ սահմանման, որը կաշկանդում է ընկալել մշակույթի պոտենցիալ դերը հասարակությունները արդիականացնելու գործում: 2009-ին Հայաստանում կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորած ԱԳՀ առաջին տարածաշրջանային համաժողովից հետո, որ կրում էր “Մշակութային քաղաքականություն եւ քաղաքականություն մշակույթի համար. դեպի նոր մշակութային քաղաքականություն” խորագիրը, Մշակույթի նախարարությունը հաստատեց

մշակույթի ավելի լայն սահմանում, որ ներառված է 2001-ի ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Մշակութային բազմազանության համընդհանուր հռչակագրում: Սա իհարկե դրական է, սակայն իրական խնդիրն այն է, թե արդյոք դա կարող է հանգեցնել մի վերաբերմունքի, որ մշակույթն ու մշակութային զարգացումը ավելի լայն ու բազմակողմանի երեւոյթ են, քան Մշակույթի նախարարության ավանդական անելիքն է, եւ այդ վերաբերմունքի շնորհիվ ունենալ գործնական արդյունքներ, որ իրապես ազդում են սոցիալ-տնտեսական օրակարգերի վրա: 2012-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության կոնվենցիաների նկատմամբ նոր մոտեցումներ քննարկելիս Մշակույթի նախարարությունը ուշադրության է արժանացրել այդ վեհաժողովի շարունակական ազդեցությունը:

Նախկին հտրիրդային պետությունների Մշակույթի նախարարությունները զարգացման հավանաբար երեք փուլ են անցել. առաջինը՝ ներքին գոյատեւում, երկրորդը՝ արտաքին սպասումների գիտակցում, որոնք հատկապես վերաբերում են հաղորդակցությանը, տեղեկատվությանը եւ թափանցիկությանը, եւ երրորդ փուլ, որին հասնում են Արեւելյան Գործընկերության տարածաշրջանի Մշակույթի նախարարությունները, երբ անհրաժեշտ է ոչ միայն տեղյակ լինել, այլեւ գործնական քայլեր ձեռնարկել այդ սպասելիքները արդյունավետ կերպով արդարացնելու համար: Նախարարությունը ցուցաբերում է պատրաստակամություն նվաճելու այն, ինչ անհրաժեշտ է երրորդ փուլում, բայց այդ փուլը պահանջում է իսկական պարտավորվածություն եւ հենվում է վստահության վրա: Հայաստանում անկախացումից հետո հասարակական ու մշակութային կյանքի քաղաքականացումը դժվարացնում է վստահության կառուցումը: Նախկինում նկատվել է քաղաքական տարբեր կամ ոչ քաղաքական, բայց իշխանություններին քննադատող համոզմունքներ ունեցող մշակութային կազմակերպությունների գործունեությունը խափանելու փորձառություն, ինչն իհարկե ոչ միշտ է ստեղծել փոխըմբռնման եւ առողջ համաձայնության մթնոլորտ նույնիսկ այնպիսի միասնական մշակութային միջավայրում, ինչպիսին Հայաստանում է: Մշակույթի նախարարությունը տեղեկացնում է, որ նման դեպքեր հիմա հազվադեպ են պատահում:

Հայաստանի մշակութային դաշտում եւ զարգացման գործում երկու շատ բնորոշ առանձնահատկությունները եկեղեցու (որի դեպքում որոշակի նմանություն կան Վրաստանի հետ) եւ Սփյուռքի դերերն են:

Արդեն նշվել է Սփյուռքի եւ դրա աջակցության, բայց ոչ այն համակարգային մոտեցման մասին, ինչ ձեւով կարգավորվում են Սփյուռքի հետ հարաբերությունները: 2008-ին ստեղծվեց հատուկ Սփյուռքի նախարարություն, որի գործունեության ամենահանրային դրսեւորումներից է “Մեկ ազգ, մեկ մշակույթ” նշանակալի բիենալե փառատոնը, որն ի սկզբանե նախաձեռնել եւ իրականացնում էր Մշակույթի նախարարությունը:

Ակտիվ մշակութային կերպար է նաեւ Հայկական առաքելական եկեղեցին եւ ոչ միայն հոգեւոր ոլորտի ու ժառանգության առնչությամբ, որտեղ մեծ դերակատարություն ունի՝ Մշակույթի նախարարության հետ միասին աշխատելով ի նպաստ մշակութային ժառանգության պահպանման եւ զարգացման: Այն, օրինակ, հաջողացրել է կրոնը ներմուծել աշխարհիկ կրթության եւ կրթական ծրագրերի մեջ: Համայնքներում բացի սովորական կրոնական, կրթական եւ հովվական գործունեությունից, ինչպիսիք են երիտասարդական ակումբները, երգչախմբերը եւ սոցիալական, բարեգործական ու հոգեւոր ներգրավվածության այլ ձեւերը, շատ վայրերում այն իր վրա է վերցրել նաեւ որոշ “Մշակույթի տների” դերը: Բազմաթիվ տեղերում Մշակույթի տները հանդես են գալիս որպես “Հայորդաց տներ”:

Մշակույթի նախարարությունը ընդգրկված է Հայաստանի կառավարության փորձնական ծրագրում՝ ուղղված ծրագրային բյուջետավորմանը, որը կապված է գործունեության պլանավորման ու մոնիթորինգի եւ վերջին հաշվով քաղաքականության համակարգման առումով ավելի վերահսկելի կառավարման հետ: Նախարարության մոնիթորինգի հատուկ մի բաժին պատասխանատու է այդ ծրագրի իրագործման համար:

3. Հետազոտական հարցում

3.1. Համատեքստ/Միջավայր

3.1.1. Մշակույթի վրա ազդեցություն ունեցող օրենսդրություն, հարկային, գրանցման եւ զբաղվածության հիմնախնդիրներ: Որքանով են դրանք նպաստում մշակույթի եւ ստեղծարարության զարգացմանը:

a. Արդյո՞ք ազգային օրենսդրությունը (օրինակ մշակույթի ոլորտի գործիչների ընկալմամբ) ուղղակիորեն արգելակում է մշակութային զարգացումը կամ մշակույթի ոլորտի առողջ գործունեությունը, որքանով է սա լուրջ խնդիր:

Պաշտոնական դիրքորոշումն այն է, որ պետական օրենսդրությունը նպաստում է Հայաստանում մշակույթի զարգացմանն ու կայացմանը, հատկապես այնպիսի օրենքներով, ինչպիսիք են “Մշակութային օրենսդրության հիմունքների մասին”-ը, նաեւ ոչ նյութական ժառանգությանը, գրադարաններին վերաբերող օրենքները եւ այլն: Որոշ քննադատներ պնդում են, որ ազգային մշակութային օրենսդրությունը ուղղակիորեն չի կաշկանդում մշակութային զարգացումը, սակայն այն նաեւ չի նպաստում այդ զարգացման կամ ոլորտի որեւէ դրական փոփոխության գործին: Նրանք պնդում են, որ հավանական է՝ մշակույթի ոլորտի հիմնական գործիչներն անգամ չկարողանան նշել, թե որն է Հայաստանում մշակութային բնագավառը կարգավորող հիմնական օրենքը եւ չիմանան դրա բովանդակությունը:

b. Արդյո՞ք ազգային օրենսդրությունն ազդում է մշակույթի եւ ստեղծարարության զարգացման վրա, որքանով է այն ընդհանուր կամ բնորոշ մշակույթին:

Մշակութային դաշտը կարգավորող հիմնական իրավական հիմքը Մշակութային օրենսդրության հիմունքների մասին օրենքն է, որը շատ ընդհանրական է: Ինչ-որ առումով այն կարող է ընկալվել որպես մշակույթին բնորոշ, եթե նկատի ունենք Հայաստանի ներկայիս մշակութային իրավիճակը, սակայն որպես հիմնական մշակութային օրենք՝ այն պարզապես իրավական նորմերի մի ամբողջություն է, որն անհրաժեշտ կերպով չի արտահայտում ոլորտի կարիքները, հետեւաբար ոլորտին հատուկ օրենսդրության մշակման անհրաժեշտություն է առաջացել:

c. Մշակութային օրենսդրության օրինակներ, որոնք, թվում է, լավ են “աշխատում”:

Մշակութային օրենսդրության լավ “աշխատող” օրինակ կարող է համարվել Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին օրենքը: Սա հավանաբար այն հատուկ ուշադրության պատճառով, որ պետությունն արժանացնում է ճարտարապետական ժառանգության պահպանությանը՝ որպես մշակութային քաղաքականության առաջնահերթություն:

d. Մշակույթին վերաբերող նոր կամ փոփոխված օրենսդրություն, որ նախատեսում է արտահայտել գոյություն ունեցող խնդիրներն ու դրանց նկարագրությունը:

Մի քանի օրենքների նախագծեր երկարատեւ մշակման գործընթացում են եղել, որոշ դեպքերում նույնիսկ պառլամենտական քննարկումների առարկա են դարձել: “Մշակութային օրենսդրության հիմունքների մասին” օրենքը ընդունվել է 2002թվականին, որից հետո ընդունվել են եւս մի քանի համապատասխան օրենքներ՝ այդ թվում փաստաթղթերի պարտադիր պատճենահանման (2005թ.), ոչ մշակութային ժառանգության (2009թ.) եւ գրադարանների մասին (2012թ.): Մշակման փուլում գտնվող օրենքի նախագծերը վերաբերում են թատրոնին, կինոյին, թանգարաններին եւ այլն՝ նպատակ ունենալով բավարարել ոլորտի էական կարիքները, այլապես նշված կարեւոր ենթաբնագավառները կարգավորման որեւէ իրավական հիմք չունեն:

e. Որքանո՞վ են հարկային կանոնակարգերը կամ խնդիրները արգելակում մշակութային զարգացումը կամ մշակույթի ոլորտի առողջ գործունեությունը (օր.՝ մշակույթի ոլորտի գործիչների ընկալմամբ):

Առայժմ գոյություն չունեն մշակույթի գործիչներին կամ մշակութային հաստատությունները շահութահարկից կամ որեւէ այլ հարկից ազատելու նորմեր: Այս խնդիրն այժմ բավական քննարկվում է, որովհետեւ նման օրենքի ընդունումը մեծ նպաստ կբերեր ոլորտին եւ կխթաներ մասնավոր ներդրումները:

f. ՅԿ կամ մշակութային առեւտրային միավոր գրանցելու գործընթացը՝ ժամկետները, փուլերը, արժեքը եւ բարդությունը:

Անդրադառնալով 2011-ին գրանցված կոնկրետ մշակութային ՅԿ-ի մի օրինակի՝ գործընթացը բավական պարզ եւ արագ էր, երբ անգամ որեւէ մասնագիտական իրավական ծառայություն չէր մասնակցել Կանոնադրություն գրելու գործին, ինչպես Հայաստանում սովորաբար արվում է: Այս պարագայում մոտ մեկ ամիս պահանջվեց կազմակերպությունը գրանցելու համար, որը սովորական գրանցման գործընթացի կրկնակի ժամկետն է, քանի որ որոշ մանրամասներ բացկայում էին, եւ անհրաժեշտություն ծագեց վերանայել եւ կրկին հանձնել փաստաթղթերը: Բյուրոկրատական որեւէ հետաձգում կամ խոչընդոտ չառաջացավ: Այժմ գործում է նաեւ Էլեկտրոնային գրանցման համակարգ, որը կոչված է ավելի հեշտացնել գործընթացը:

3.1.2. Թափանցիկություն եւ կոռուպցիա

a. Թրանսփերենսի Ինթերնեյշնլ-ի վերջին վարկանիշը՝ համամետած երկու տարի առաջվա արդյունքի հետ:

http://www.transparency.org/country#ARM_DataResearch_SurveysIndices

2011թ. 10-ից 2,6 միավոր, 129-րդ տեղը 183-ի մեջ
2010թ. 2,6 միավոր
2009թ. 2,7 միավոր

Միավորները տատանվում են 0-ից (խիստ կոռումպացված) մինչեւ 10 (շատ մաքուր)։

b. Որեւէ այլ վստահելի աղբյուր, որ ցույց է տալիս մշակույթի ոլորտի անմիջական կոռուպցիայի կամ թափանցիկության դիտավորյալ պակաս կամ ընդհանուր կոռուպցիայի ազդեցությունը մշակութային դաշտի վրա:

Մշակույթի բնագավառում դժվար է խոսել “ուղիղ կաշառքի” մասին, բայց այստեղ նույնպես հնարավոր չէ խուսափել կոռուպցիա կոչված վարակից: Դժբախտաբար դեռ խնդիր են կասկածելի նշանակումները եւ ֆինանսավորման անարդար բաշխումը: Պաշտոնների նշանակումները հաճախ հիմնվում են ոչ թե պրոֆեսիոնալիզմի եւ գիտելիքի, այլ ազգակցական կապերի եւ այլ կոռումպացված փորձառությունների վրա, որ տարածված են հետխորհրդային անկախ Հայաստանի կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Հայկական պաշտոնական աղբյուրները նշում են, որ 2001թվականի Քաղաքացայության մասին օրենքով փորձ է արվել կառավարական մարմիններում նշանակումները դարձնել ավելի թափանցիկ եւ արդար, դրանով բացառվում է հարազատների նշանակումը անմիջական ենթակայության ներքո:

3.1.3. Պաշտոնական եւ հանրային տեղեկատվության տրամադրում եւ տարածում

a. Արդյո՞ք մշակույթի նախարարության կայքը պարունակում է ներկայիս ողջ մշակութային օրենսդրությունը եւ հեշտացված հղում դեպի դա:

Նախարարության նոր կայքը ունի համապատասխան բաժիններ, սակայն գործարկումից մոտ երկու ամիս հետո դեռ ամբողջությամբ լրացված չէ (մարտ 2012):

b. Որքանո՞վ է Մշակույթի նախարարության կայքը պարունակում մշակութային կազմակերպությունների եւ/կամ անհատների համար օգտակար տեղեկատվություն խորհրդատվության, աջակցության կամ ֆինանսավորման վերաբերյալ:

Այս առումով կայքն ամենեւին օգտակար չէ, քանի որ հակված է հրապարակել *արդյունքները* քան *հայտարարությունները* ու սովորաբար դժվար է հասկանալ, թե ինչպես է ընթացել ընտրությունն ու որոշում կայացվել ֆինանսավորման համար:

c. Արդյո՞ք Մշակույթի նախարարության կայքը պարունակում է օգտակար տեղեկատվություն նախորդ տարի կամ շրջան մշակութային կազմակերպություններին եւ/կամ անհատներին իրենց տրամադրած աջակցության կամ ֆինանսավորման վերաբերյալ:

Նման տեղեկատվություն ներառվում է տարեկան եւ բյուջետային գեկույցների մեջ, որոնք տեղադրվում են առցանց:

d. Արդյո՞ք Մշակույթի նախարարության կայքը պարունակում է բավարար մանրամասն տեղեկատվություն իր բյուջեի, հատկացումների եւ իրական ծախսերի մասին:

Տարեկան բյուջեների, ծախսերի միջնաժամկետ ծրագրերի, տարեկան գեկույցների, իսկ ոմանց պնդմամբ նաեւ փաստացի ծախսերի վերաբերյալ շատ սահմանափակ տեղեկատվություն է հասանելի, նման տեղեկությունները հիմնականում վերաբերում են անցած հաշվետու տարվան եւ հաշվետվությունները՝ ավարտված միջոցառումներին:

e. Եթե a.-ից մինչեւ d. կետերից որեւէ մեկը առկա չէ Մշակույթի նախարարության կայքում, արդյո՞ք դրանք հասանելի են էլեկտրոնային ձեւով (որեւէ այլ կայքում) կամ տպագիր նյութերում:

Նման տեղեկատվության հիմնական աղբյուրը www.e-gov.am կայքն է:

f. Մշակույթի նախարարության կայքի օգտագործման մակարդակը՝ օրինակ, այցելուներ, սեղմումներ:

Մշակույթի նախարարության տվյալներով՝ նման տեղեկատվություն առայժմ չի հավաքվել:

g. Մշակույթի նախարարության կայքում այլ նախարարությունների կամ մշակույթին, համալիր պլանավորմանը եւ մշակութային գործունեությանը վերաբերող կրթության, երիտասարդության եւ լիցենզավորման կենտրոնական ու տեղական իշխանությունների խաչաձեւ հղումների մակարդակը:

Որեւէ նման տեղեկատվություն չկա նախարարության կայքի թարմացված տարբերակում: Չգացվում է, որ նման տեղեկություններ կարելի է գտնել այլ կերպ՝ www.gov.am պաշտոնական կայքում: Սակայն սովորաբար տեղադրվում է հանրային հաստատությունների, կառավարական եւ պետական մարմինների ցանկը: Երբեմն պետական մարմինները չունեն առցանց ներկայություն, եւ որոշ մարդկանց կարծիքով՝ մշակույթի նախարարությունն ինքը մեծ ուշադրություն չի դարձնում էլեկտրոնային առցանց բովանդակությանը:

3.1.4. Մշակութային քաղաքականությունների ինտեգրում այլ քաղաքականությունների եւ մարտավարությունների մեջ

a. Քաղականության փաստաթղթերի կամ տեղեկատվության այլ պաշտոնական աղբյուրների առկայություն:

Իրականում գոյություն ունեն մի շարք փաստաթղթեր, որոնց որոշ մասը ինչ-որ կերպ հասանելի է, բայց հաճախ դրանց ենթադրած գործունեությունն ու արդյունքները պարզապես մնում են թղթի վրա:

b. Միջնախարարական կամ միջգերատեսչական համատեղ գործունեության օրինակներ:

Որքանով նկատվում է, Մշակույթի նախարարությունը հիմնականում համագործակցում է Կրթության, Արտաքին գործերի եւ Սփյուռքի նախարարությունների հետ: Կրթության նախարարության հետ համագործակցությունը կայանում է մշակութային կրթության եւ այլ կրթական ծրագրերի շրջանակներում: Արտգործնախարարության հետ համագործակցությունը վերաբերում է միջազգային հարաբերությունների բոլոր դեպքերին, իսկ Սփյուռքի նախարարության պարագայում հետաքրքրության առարկան արտերկրում բնակվող հայերին գրավող թեմաներն են:

2008-ին Մշակույթի եւ Էկոնոմիկայի նախարարության համագործակցության մի դեպք գրանցվեց “Մշակույթի հանրահռչակման ծրագրի” շրջանակներում, որը ներառված է Էկոնոմիկայի նախարարության Չարգացման պլանավորման շրջանակում:

http://www.dpf.am/uploads/P_Culture%20Proclamation_arm.pdf

c. Կանոնավոր Ֆորմալ կամ ոչ Ֆորմալ պլանավորում, խորհրդատվություն կամ նմանատիպ հանդիպումներ:

Դժվար էր գտնել վկայություն կայացած նմանատիպ խորհրդատվության կամ հանդիպումների վերաբերյալ՝ ուղղված մշակութային քաղաքականությունը այլ քաղականությունների եւ ռազմավարությունների հետ ինտեգրելուն, թեեւ տե՛ս նաեւ 4.1.5. a.-ի մեկնաբանությունը:

3.1.5. Գործնական պատասխանու եւ բաց վարվելակերպ

a. Ֆորմալ կամ ոչ Ֆորմալ խորհրդատվության եւ ճեպագրույց հանդիպումների վկայություն (1) մշակույթի ոլորտի գործիչների եւ (2) մամուլի ու լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Վերջին տարիներին մշակույթի նախարարությունը ձգտում է բաց լինել ինչպես իր շահագրգիռ կողմերի, այնպես էլ հասարակության նկատմամբ: Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ տարբեր ենթաբնագավառների ներկայացուցիչների հետ՝ փորձելով հաշվի առնել վերջիններիս կարծիքը որոշումների կայացման գործընթացներում: Նաեւ կանոնավոր մամլո ասուլիսներ են կազմակերպվում, որոնք հիմնականում տեղեկատվական նպատակներ ունեն, կապվում են կոնկրետ իրադարձությունների հետ կամ ներկայացնում են որոշակի շրջանի անելիքները: Նախարարությունը նաեւ տարեկան հաշվետու մամլո ասուլիսներ է հրավիրում լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ եւ ներկայացնում տարվա նվաճումներն ու ձախողումները:

Նախորդ երկու տարիների ընթացքում կազմակերպվել են Թատերական խորհրդի 3, Կինոյի խորհրդի 5, Գրական խորհրդի 10, Երաժշտական խորհրդի 4 եւ Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության խորհրդի 25 հանդիպումներ:

b. Հասարակության շահագրգիռ հատվածներին ընդհանուր քաղաքականության, բյուջեի եւ գործունեության մասին տեղեկատվության կանոնավոր մատուցման վկայություն:

Մի քանի տարի առաջ պաշտոնական կայք ստեղծելուց հետո քիչ թե շատ հնարավոր է հետեւել զարգացումներին, առնվազն կարելի է տեսնել Մշակույթի նախարարության կողմից աջակցություն ստացող միջազմառումները եւ որոշ այլ նախաձեռնություններ: Բայց սա միայն տեղեկատվության մակարդակում, քանի որ չի բացահայտում քաղաքականության, պլանավորման կամ որոշումների կայացման խնդիրների էությունը:

c. Բիզնես պլանների եւ մշակույթի ոլորտի համար պատասխանատու իշխանությունների թիրախների հանրային հասանելիությունը:

Պետական իշխանությունների կողմից ներդրված էլեկտրոնային կառավարման համակարգի օգնությամբ ընդամենը մի քանի սեղմումով յուրաքանչյուրի համար հասանելի կարող են դառնալ բյուջեի մասին տեղեկատվությունը, ծախսերը եւ նմանատիպ այլ հարցեր, բայց այդ թվերը հաճախ լույս չեն սփռում գործընթացների վրա (<https://www.e-gov.am/>):

Ընդհանրապես սովորություն չկա հրապարակել գալիք տարվա կամ տարիների նպատակներն ու թիրախները՝ օրինակ մանրամասն բիզնես պլանի տեսքով, բացի ընդհանուր նշումներից, որ, օրինակ, քաղաքականությունն ուղղված է լինելու երիտասարդությանը կամ թե որ հոբբեյաններն են նշվելու առաջիկայում:

Ինչ վերաբերում է քաղաքային իշխանություններին, Երեւանի քաղաքապետարանն ունի Մշակույթի, կրթության եւ սոցիալական անվտանգության մշտական հանձնաժողով, որը քաղաքում իրականացվող մշակութային գործունեության գործադիր մարմինն է: Իրենց կայքում տեղեկատվություն կա այն մասին, թե "ով ով է" քաղաքապետարանում, որը կարելի է գտնել նաեւ անգլերենով (<http://www.yerevan.am/>): Կայքում նրանք տեղադրում են նաեւ գալիք տարվա բյուջեն ու հատկացումները՝ այդ թվում եւ մշակույթի ֆինանսավորումը, որը ներառում է նաեւ կրթությունն ու ժամանցը: Տեղեկատվությունը ներկայացվում է հիմնականում ամփոփ թվերով, որոնք հատկացվել են գրադարաններին, թատրոններին, բայց չեն բացահայտում մարտավարական ուղղությունները կամ բիզնես պլանը:

3.1.6. Աջակցություն մշակույթի ոլորտին

a. Վկայություն կամ մշակույթի ոլորտի մասնագետների ընկալումն այն մասին, թե կենտրոնական եւ տեղական իշխանությունները որքանով են տեղյակ մշակույթի եւ մշակութային գործունեության աջակցող դերի մասին՝ ուղղված սոցիալ-տնտեսական զարգացմանը, սոցիալական համախմբվածությանը, կոնֆլիկտների հաղթահարմանը եւ միջմշակութային երկխոսությանը:

Պաշտոնական փաստաթղթերի եւ հանրային ելույթների բազում վկայություններ կան մշակույթի եւ մշակութային գործունեության ներուժի վերաբերյալ, սակայն այդ որակումները գործնական կիրառության մեջ դնելու փաստեր դժվար է գտնել:

b. Ոլորտին վերաբերող որակյալ վիճակագրության, ուսումնասիրությունների եւ գիտելիքի հասանելիությունը:

Չի նկատվում որեւէ կազմակերպություն, որը զբաղվում է մասնավորապես մշակույթի եւ մշակութային քաղաքականության հետազոտությամբ կամ վիճակագրության ուսումնասիրությամբ: Գոյություն ունեն կոնկրետ հաստատություններ կամ կազմակերպություններ, որոնք հետազոտում են իրենց առանձնահատուկ հետաքրքրության առարկա հանդիսացող ճյուղեր, օրինակ՝ ճարտարապետություն, հնագիտություն կամ ազգագրություն:

Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունն իր տարեգրքերում ներառում է “Կրթություն և մշակույթ” բաժինը, որտեղ ամփոփում է որոշ վիճակագրություն՝ ավելի շատ նկարագրական և քանակական, քան վերլուծական:
<http://www.armstat.am/en/?nid=45&year=2011>.

3.1.7. Անկախ և հասարակական ոլորտի դերը

a. Մշակութային հասարակական ոլորտի ներուժի և (ան)կարեւորության ընկալումը

- կենտրոնական իշխանությունների կողմից
- տեղական իշխանությունների կողմից:

Հայաստանում բոլոր ոլորտներում հասարակական կազմակերպությունների կտրուկ աճի հետ տարածում է ստացել նաեւ այն ընկալումը, որ դրանք ստեղծվում են միջազգային դրամաշնորհներից “գումարներ աշխատելու” համար: Այնուամենայնիվ դժվար է չընդունել այն մեծ դերը, որ հասարակական կազմակերպություններն ունեն ոլորտի զարգացման գործում՝ ձգտելով խրախուսել իշխանություններին, ազդեցություն ունենալ ի օգուտ զարգացման, ինչպես նաեւ առաջ տանել ոլորտի կարիքները:

Ընդհանրապես կենտրոնական իշխանությունները՝ օրինակ Մշակույթի նախարարությունը, ի տարբերություն տեղական իշխանությունների (որոնց պարտադիր և պատվիրակված լիազորությունները սահմանված են համապատասխան օրենսդրությամբ)՝ ավելի շատ են տեղյակ գլոբալ զարգացումներից: ՀՀ-ների նկատմամբ նախարարության վերաբերմունքն արտահայտվում է այն փաստով, որ քառասուներեք դրամաշնորհ է տրվել ՀՀ-ներին 2008թ-ի ընթացքում, հիսուններկու՝ 2009թ-ին, վաթսուներկու՝ 2010թ-ին և յոթանասուներեք դրամաշնորհ՝ 2011թվականին: Դրան հակառակ՝ տեղական իշխանությունները հաճախ մշակույթը չեն համարում իրենց գործունեության ակտիվ մաս, այլ ավելի շատ որպես պաշտոնական նախաձեռնությունների զարդարանք:

b. Մշակույթի ոլորտի մասնագետների կողմից մշակութային հասարակական ոլորտի (ան)կարեւորության և ներուժի ընկալումը:

Նրանց, ում իրականում հնարավոր է համարել մշակույթի ոլորտի մասնագետներ՝ ենթադրելով, որ իսկապես տեղյակ են գլոբալ մշակութային իրավիճակից, նրանք ինքները հակված են հիմնել մշակութային ՀՀ-ներ այն գիտակցությամբ, որ դա հնարավոր զարգացման մի ճանապարհ է, ինչպես նաեւ միջազգային ֆինանսավորման և այլ հնարավորությունների աղբյուր:

c. Գրանցված “մշակութային” ՀՀ-ների թիվը:

Հաշվարկների համաձայն՝ Հայաստանում գրանցված է մոտ 900 մշակութային հասարակական կազմակերպություն:

d. Ակտիվ “մշակութային” ՀՀ-ների թիվը:

Ամենակտիվ մշակութային ՀՀ-ների շարքում հաճախ պետության կողմից հիմնվածներն են, որոնք կոնկրետ հանձնարարություններ են կատարում, օրինակ՝ “Մեկ ազգ, մեկ մշակույթ” հիմնադրամը: Գոյություն ունեն, օրինակ, Մշակույթի նախարարությանը ենթակա յոթանասուներեք պետական ՀՀ-ներ: Բայց կան նաեւ ակտիվ և անկախ ՀՀ-ներ, որոնք միայն որոշ աջակցություն են ստանում պետությունից, օրինակ՝ Ոսկե ծիրան կինոյի զարգացման հիմնադրամը, Արվեստի քննադատների ազգային ասոցիացիան և այլն: Նախարարությունը պնդում է, որ ՀՀ-ների հետ ակտիվ և անկողմնական համագործակցությունը պետական քաղաքականություն է իրենց համար: Բացի վերը նշված երկու ՀՀ-ների օրինակից, նախարարությունը ուշադրության հրավիրեց այլ ակտիվ ՀՀ-ների նկատմամբ, ինչպիսիք են՝ Նկարիչների միությունը, ԻԿՈՄ-ի Հայաստանի ազգային կոմիտեն, Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը և այլն:

Դժվար է ճշգրիտ գնահատել, բայց գրանցված ՅՎ-ների հավանաբար 10-20%-ն է ակտիվ: Շատերը պահպանում են գրանցումը, բայց գործունեություն չեն ծավալում:

e. 15-ից ավելի աշխատողներ ունեցող “մշակութային” կամ անկախ ոչ առևտրային մշակութային կազմակերպությունների թիվը:

Նման տեղեկատվություն չի գտնվել, բացի այն, որ իրենց ենթակայության տալ գտնվող պետական ՅՎ-ներից երեսուներեքը ունեն 50-ից ավելի աշխատող:

3.1.8. Մասնավոր եւ առևտրային ոլորտի դերը

a. Մշակութային մասնավոր ոլորտի ներուժի եւ կարեւորության ընկալումը

- կենտրոնական իշխանությունների կողմից
- տեղական իշխանությունների կողմից
- մշակութային առևտրային ոլորտի մասնագետների կողմից
- ոչ առևտրային ոլորտի մասնագետների կողմից

Դժբախտաբար ցանկացած բիզնես փոխազդեցություն մշակույթի հետ բացասական իմաստով կապվում է առևտուր բառի հետ:

Հայաստանում իրական պատկերացում չկա “ստեղծարար տնտեսության” վերաբերյալ (տե՛ս ներքեւում).

b. Գրանցված բիզնեսների թիվը, որոնք համարվում են մշակութային ոլորտի մաս, կամ որեւէ համապատասխան վիճակագրություն առևտրային մշակութային գործունեության վերաբերյալ:

Նման տվյալներ հասանելի չեն: Մշակութային ոլորտի մաս համարվող բիզնեսները՝ օրինակ տեսալսողական (աուդիո-վիզուալ) արտադրության, միջոցառումներ կազմակերպող ընկերությունները, հիմնականում ընկալվում են ոչ թե մշակութային, այլ պարզապես առևտրային: Իրականում խնդիրն այն է, որ մշակույթի ընդհանուր ընկալման ու ըմբռնման խնդիր կա դրա ժամանակակից իմաստով, նաեւ այն համեմատությամբ, թե ինչպիսի նշանակություն է դրան տրվում, օրինակ, Եվրոպայում:

c. Առևտրային մշակութային ոլորտի ֆինանսական շրջանառությունը, եթե նման տեղեկություն հասանելի է որեւէ պաշտոնական վիճակագրությունից կամ վստահելի աղբյուրից:

Նման տեղեկատվություն չի գտնվել:

d. Ավելի քան 50 աշխատող ունեցող առևտրային մշակութային կազմակերպությունների թիվը:

Նմանատիպ մի քանի կազմակերպություններ կարող են լինել՝ ավելի քան 50 աշխատողներով, քանի որ դրանք որպես կանոն պահում են 10-ից ոչ ավելի անձնակազմ եւ հակված են միայն անհրաժեշտության դեպքում վարձել ժամանակավոր աշխատողներ կամ նույնիսկ դիմում են կամավորների օգնությանը: Մշակույթի նախարարության տվյալներով՝ գոյություն ունի մեկ այդպիսի կազմակերպություն, որտեղ աշխատում է 50-ից ավելի մարդ:

3.1.9. Տեղական մամուլի, լրատվամիջոցների, ինտերնետի եւ մասնագիտական հրատարակությունների հետաքրքրությունը մշակույթի եւ մշակութային խնդիրների նկատմամբ

a. Մասնագիտական մշակութային հրատարակությունների թիվը, դրանց ընթերցվածությունը եւ տպաքանակը:

Սա դեռ չզարգացած ոլորտ է Հայաստանում, ինչը որոշ առումով ֆինանսավորման խնդիր է, որոշ առումով էլ՝ պահանջարկի: Տեղեկատվություն տրամադրողներից ոմանք կարծում են, որ

հավանաբար տասից պակաս անուն հրատարակություն կարելի է գտնել, եթե նկատի ունենանք լուրջ պարբերականները: Մշակույթի նախարարությունը արդարացիորեն նշում է, որ դա չի վերաբերում մի շարք այլ պարբերականների, որոնցից մի մասին իրենք անձամբ ֆինանսավորում են: Նրանք նշում են նաեւ, որ մշակույթն ու մշակութային խնդիրները լուսաբանում են բոլոր թերթերը եւ երկու հեռուստատալիքներ (“Շողակաթ” եւ “ԱրմՆյուզ”): Մշակութային մասնագիտական հրատարակություններին նշվում է “Գրականություն” ամսագիրը, “Գարուն”-ը, “Նարցիս”-ը, “Յուզարձան”-ը, “Կամար” թերթը (Էլեկտրոնային), Ոսկե ճիրան փառատոնային թերթը, “Արտերիա”, “Մշակույթ”, amsagir.am Էլեկտրոնային ամսագրերը, “Սիմենարտ”-ը, “Վարձք”-ը, “Յոգեւոր հայրենիք”-ը:

b. Մշակույթի ոլորտի մասնագետների համար կարելու է օգտակար “մշակութային կայքերի” թիվը:

Կարելու է օգտակար կայքերի շարքում են www.mincult.am-ը, www.gaiff.am-ը, www.granish.org-ը, www.inknagir.org-ը: Նախարարությունը նշում է նաեւ հետևյալ կայքերը՝ www.yerevan2012.org, www.twunion.com, www.armbookexpo.com, www.gallery.am, www.akhic.am, www.matenadaran.am, www.apo.am, www.naregatsi.org, www.armmonuments.am, www.arteria.am, www.armenianarchitecture.am, www.komitas.am, www.cmf.am, www.filmaser.com, www.armenianhouse.com.

Որոշ պնդումների համաձայն՝ տեղական առցանց մշակութային միջավայրն ընդհանրապես հարուստ չէ, թեև բոլոր մշակութային կազմակերպություններն ունեն իրենց կայքերը: Վերջերս ի հայտ եկած առցանց նախաձեռնություններից է ժամանակակից մտքի եւ գործունեության մասնագիտական մի կայք, www.arteria.am՝ նշված նախարարության տրամադրած ցանկում, որն անդրադառնում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներին, այն հիմնվել է Եվրասիա համագործակցության հիմնադրամի դրամաշնորհի միջոցներով:

c. Հասանելի վիճակագրություն նման կայքերի օգտագործման վերաբերյալ՝ սեղմումներ, այցելումներ եւ այլն:

Նման տվյալներ հասանելի չեն: Նմանատիպ կայքերի թիվը մեծ չէ, դրանք մրցակցության մեջ չեն, հետևաբար ոչ միշտ են պահում այդպիսի վիճակագրություն: Իր “Արվեստ, մշակույթ եւ պատմություն” (<http://circle.am/?cat=art&for=week&by=visits>) բաժնում թվեր է պարունակում տեղական ամենաշատ օգտագործվող վիճակագրության վերլուծական կազմակերպությունը: 2012-ի հունվարին շաբաթական 2000 այցելություններով առաջին հորիզոնականում էր ժամանակակից հայտնի ու հակասական գրող Վահրամ Սահակյանի կայքը:

d. Որքան սովորական շաբաթվա ընթացքում տեղական ՉՄՆ-ների անդրադարձը մշակութային իրադարձություններին ու բանավեճերին (օրինակ՝ հոդվածների քանակը հիմնական օրաթերթերում ու շաբաթաթերթերում/ամսագրերում, լրատվամիջոցների կողմից հիշատակումների, հարցազրույցների եւ մշակութային իրադարձություններին վերաբերող հաղորդումների թիվը):

Արվեստն ու մշակույթը լրատվամիջոցների կողմից ուշադրության արժանանում են ամենավերջում, անգամ եթե հոդվածում կամ հաղորդման մեջ իսկապես կարելու խնդիր կա: Միայն եթե շատ կարելու իրադարձության բացումն է, պրեմիերան կամ շատ հատուկ մի հյուր է ժամանում, արվեստն ու մշակույթը կարող են հայտնվել շապիկներին կամ առաջնահերթ տեղ ունենալ օրվա լրատվության մեջ: Շատ քիչ են մշակութային մասնագիտական վերլուծական ամսագրերը կամ հրատարակությունները:

e. Մշակույթի ոլորտի մասնագետների ընկալմամբ կամ այլ վկայությամբ՝ արդյո՞ք նախորդ երկու տարիների ընթացքում տեղական մամուլի, լրատվամիջոցների, ինտերնետի եւ մասնագիտական հրատարակությունների հետաքրքրությունը մշակույթի եւ մշակութային խնդիրների նկատմամբ աճել, նվազել, թե նույնն է մնացել:

Կարծիքներից մեկն այն է, որ մի փոքր դրական տեղաշարժ է գրանցվել՝ կապված արվեստի եւ մշակույթի հանդեպ ավելի լայն հասարակական հետաքրքրության հետ: Մշակույթի նախարարության կարծիքով՝ վերջին տարիներին մշակույթի նկատմամբ հանրային հետաքրքրությունը էականորեն մեծացել է:

3.1.10. Մշակույթին, դրա ապահովմանն ու մատչելիությանը վերաբերող քաղաք-գյուղ տարբերությունները

Վկայություն (քաղաքական հայտարարություններ, նախարարական ելույթներ, լուրջ լրատվական անդրադարձներ) այն մասին, թե որքանով է այս հարցը կարեւոր կամ առաջնահերթ ազգային իշխանությունների համար:

Թեեւ հիմնական մշակութային իշխանություն համարվող Մշակույթի նախարարությունը մեծ ջանքեր է ներդրում մշակութային ապակենտրոնացման գործընթացի ուղղությամբ, դա կախված է նաեւ տեղական իշխանություններից, որոնք բավական ցածր պատկերացումներ ունեն մշակույթի վերաբերյալ: Այս հարցին վերաբերող խոչընդոտների մեծ մասն ամփոփված են “Մշակութային քաղաքականությունների ամփոփագրում”

(http://www.culturalpolicies.net/down/armenia_102011.pdf):

3.1.11. Լեզվական խնդիրներ

Արդյո՞ք կա ներկայիս կարգավիճակի ընկալելի ակնհայտ բարելավում կամ վատթարացում՝ համեմատած երկու տարի առաջվա հետ:

2010-ի սկզբին Կրթության նախարարությունը փորձեց փոխել լեզվի մասին օրենսդրությունը: *Լեզվի մասին օրենքի* նոր նախագիծը վերաբերում է օտարալեզու միջնակարգ դպրոցների բացման իրավական հիմնավորմանը, ինչը հանդիպեց հասարակության մտավորական շրջանակների անսպասելի բացասական արձագանքին, եւ դրա քննարկումները ուղեկցվեցին հանրային բողոքի ակցիաներով, որոնք լայնորեն լուսաբանվեցին Էլեկտրոնային սոցիալական ցանցերում ու ՉԼՄ-ների կողմից: Հայաստանյան քաղաքացիական հասարակությունը մտահոգված է օտարալեզու դպրոցների թվի հնարավոր արագ աճով, որն իր հերթին կսպառնա հայալեզու դպրոցների զարգացմանն ու կարգավիճակին: Օտարալեզու դպրոցների բացումը կնշանակի վնասել ազգային մշակույթին եւ ինքնությանը: Խնդրի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել “Մշակութային քաղաքականությունների ամփոփագրում”

www.culturalpolicies.net/web/armenia.php?aid=425:

3.2. Ստեղծում/արտադրություն եւ պահպանություն/վերականգնում

3.2.1. Ժամանակակից մշակութային ստեղծագործության հարաբերական կարեւորությունը ազգային մշակութային քաղաքականության մեջ եւ գործնականում (օր.՝ ֆինանսավորման մեջ)

Ժամանակակից արվեստագետներին, ստեղծագործողներին եւ պրոդյուսերներին աջակցելու պաշտոնական հետաքրքրության վկայություն քաղաքականության փաստաթղթերի, բյուջետային հատկացումների, քաղաքական հայտարարությունների, նախարարական հղումների (օր.՝ հիշատակում ելույթների մեջ) ձեւով:

Աջակցություն ցուցաբերվում է հիմնականում ավանդական մշակույթին: Պետության կողմից աջակցություն ստացող միայն մի քանի նախաձեռնություններ են, որ կարելի է բնութագրել որպես

Ժամանակակից՝ այդ թվում Ոսկե Ծիրան միջազգային կինոփառատոնը, որը Մշակույթի նախարարությունից տարեկան ստանում է 50,000,000 դրամ (մոտ 100,000 Եվրո), եւ Հայֆեստ կատարողական արվեստների միջազգային փառատոնը, որը Մշակույթի նախարարությունից տարեկան ստանում է 40,000,000 դրամից (80,000 Եվրո) պակաս: Թեեւ Ազգային կինոկենտրոնը տարեկան մոտ 400,000,000 դրամ (800,000 Եվրո) է ստանում նոր ֆիլմերի արտադրության համար, ոչ բոլորը կպնդեն, թե այդ գումարը բաշխվում է ոչ միայն թվացյալ թափանցիկ կամ մրցակցային հիմքերով, այլեւ արդյունքը ոչ միշտ է հնարավոր բնութագրել որպես “Ժամանակակից”:

Նախարարության ժամանակակից արվեստի բաժինն այժմ ձգտում է առավել աջակցող լինել տարբեր ժամանակակից արվեստագետների նկատմամբ, բայց այդ աջակցությունը որպես կանոն չի ուղեկցվում է ֆինանսական օգնությամբ: Այնուամենայնիվ Նախարարությունն ուշադրություն է հրավիրում “Մշակութային ծրագրերի իրականացման” ներքո տրամադրված տեղեկատվության վրա, որտեղ տարբեր ենթախմբերով ներկայացված են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են երաժշտությունը, թատրոնը, պարը, կինոն եւ ժամանակակից արվեստին աջակցելու այլ օրինակներ՝ այդ թվում պատվերներին, գնումներին ու այլ ուղղություններով տրամադրված ֆինանսավորումը:

Այս օրինակներից բացի, պետական իշխանությունները հիմնականում կենտրոնացած են մշակույթի ավանդական ճյուղերի, ինչպիսիք են օպերան եւ բալետը, եւ արվեստի ավանդական ձեւերով զբաղվող արվեստագետների ուղղությամբ՝ նկարչություն, քանդակագործություն, գրականություն եւ այլն:

3.2.2. Այն միջավայրի նկարագրություն, որում տեղ են գտնում մշակույթի եւ արվեստի բազմատեսակ ստեղծագործություններն ու արտադրությունները

Պաշտոնական աջակցության կամ դրա բացակայության կոնկրետ օրինակներ

(i) օգտագործելով հետեւյալ տարբերակները

- **շատ աջակցող**
- **աջակցող**
- **ո՛չ աջակցող, ո՛չ բացասական**
- **բարդ**
- **թշնամական**

(ii) կիրառողների ընկալումը իրենց ստեղծարար եւ աշխատանքային միջավայրի վերաբերյալ:

Ունենալով միահամուռ եւ հինավուրց պատմություն՝ Հայաստանը մշտապես ձգտել է աջակցել ստեղծարար գործընթացներին, արտադրությանը եւ զարգացմանը: Այս համատեքստում կառավարության եւ հասարակության տարբեր շերտերի կողմից ողջունելի են ավանդական մշակույթի բոլոր ձեւերը: Բայց նաեւ լինելով բավական ավանդապահ ազգ՝ հայերի մեծամասնությունը մինչեւ հիմա պարզ պատկերացում չունի ժամանակակից մշակութային զարգացումների վերաբերյալ: Նման անփոփոխ մշակութային մտածողության դեպքում սա լավագույն միջավայրը չէ մշակութային “նորարարների” համար: Վերջիններս մեծամասամբ երիտասարդ սերնդի ներկայացուցիչներն են եւ ժամանակակից մտածողությամբ արվեստագետների այն քիչ խմբերը, որ վարագույրը ճեղքել էին նաեւ խորհրդային շրջանում: Այդ պատճառով արդարացի կլինի նշել, որ աշխատանքային միջավայրը առանձնակի աջակցող չէ նորարարների համար, եւ շատ դեպքերում այն իրականում ընկալվում է որպես բարդ:

Այդուհանդերձ, Մշակույթի նախարարության կարծիքով վերջին տարիներին փորձ է արվում որոշ չափով խթանել անհատական մշակութային եւ ստեղծարար զարգացումը հատկապես այնպիսի ծրագրերի միջոցով, որոնք ուղղված են երեխաների եւ երիտասարդների մշակութային կրթությանը:

3.2.3. Ստեղծարարություն

a. Ստեղծարարության կամ “ստեղծարար տնտեսության” հասկացության մասին քաղաքական փաստաթղթեր, հայտարարություններ կամ պաշտոնական դիտարկումներ:

Ստեղծարարությունը պաշտոնական քննարկման առարկա չէ, թեև դա մի հասկացություն է, որը տարբեր բնագավառներում ավելի ու ավելի են ձգտում դարձնել պաշտոնական մոտեցման մի մաս: Ինչ վերաբերում է “ստեղծարար տնտեսություն” հասկացությանը, դժվար է համապատասխան համատեքստ փնտրել, քանի որ Հայաստանի տնտեսությունը համարվում է զարգացող ու դեռ բազում տարրական դժվարություններ ունի: Այս պարագայում “ստեղծարար տնտեսություն” հասկացությունն օգտագործվում է հիմնականում երիտասարդների կողմից որպես ժամանակակից մի տերմին, որը կիրառության մեջ դնելու դեպքում կարելի է նոր հեռանկարներ բացել ամբողջ երկրի տնտեսական զարգացման համար:

b. Մշակույթի ոլորտի մասնագետների ընկալումը մամուլի, լրատվամիջոցների կամ մասնագիտական ամսագրերի ու ֆորումների կողմից ստեղծարարության լուսաբանման վերաբերյալ՝ մեծ հետաքրքրություն/որոշ լուրջ հետաքրքրություն/քիչ հետաքրքրություն/հետաքրքրության բացակայություն:

2011-ի օգոստոսին երեւանում բացվեց ստեղծարար տեխնոլոգիաների մի կենտրոն՝ (www.tumo.org), որը տերմինը հասարակության լայն կիրառության մեջ դրեց: Բացի այդ ստեղծարարությունը հիմնականում քննարկվում եւ հետաքրքրություն է ներկայացնում տարբեր բնագավառներում աշխատող երիտասարդների համար, ովքեր ակտիվ ու ստեղծարար են ինչպես առցանց, այնպես էլ իրական կյանքում:

3.2.4. Ժառանգություն

a. Ժառանգությանը վերաբերող ներկայիս հիմնական խնդիրները սահմանված.

- պաշտոնական իշխանությունների՝ օր. Մշակույթի նախարարության կամ քաղաքային ղեկավարության կողմից
- աշխատող մասնագետների կարծիքով
- քաղաքացիական հասարակության/համայնքային խմբերի կողմից՝ ներառյալ փոքրամասնությունները:

Պետական դիրքորոշման համաձայն՝ նախ եւ առաջ նյութական մշակութային ժառանգության պահպանությունն է մշակույթի ոլորտի առաջնահերթությունը: Ճարտարապետական հուշարձանների վերականգնման եւ պահպանության ֆինանսավորման դեպքում առաջնայնությունը տրվում է հատկապես մեծ թվով միջնադարյան հայկական եկեղեցիներին: Հայաստանում ժառանգությունն ասելով հիմնականում նկատի ունեն ճարտարապետությունը եւ ոչ անցյալից ժառանգած այլ մշակութային նմուշները:

Մշակույթի նախարարությունն իր հերթին մեկնաբանում է, որ մշակութային ժառանգության պահպանման իր քաղաքականությունը ներառում է ինչպես անշարժ, այնպես էլ շարժական հուշարձանները: Անշարժ ժառանգության առաջնությունը հիմնական մարմինը Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունն է, սակայն այս ոլորտում են գործում նաեւ երկու պետական ոչ առետրային կազմակերպություններ՝ մեկ ՊԲԸ եւ մեկ ՀԿ, ինչպես նաեւ չորս մասնավոր կազմակերպություններ՝ բոլորն էլ նախարարության հովանու ներքո: Ծարժական ժառանգության առաջնությունը նշվում են 66 թանգարանները, 16 գրադարանները, Ազգային գրապալատը եւ Հայաստանի ազգային արխիվը:

b. Պաշտոնական կամ ոչ պաշտոնական որեւէ համապատասխան վկայություն այն մասին, թե որքանով են քաղաքացիական հասարակությունը/համայնքային խմբերը ներգրավված ժառանգությանը վերաբերող որեւէ գործունեության մեջ՝ (գրանցված հայտնի խմբերի/հանրույթների, նախագծերի/վայրերի թիվ, համապատասխան լրագրերի, կայքերի գոյություն եւ այլն):

Անգամ ճարտարապետական ժառանգության նկատմամբ նման մեծ ուշադրության պարագայում, որը վերջին տարիներին վերահսկվել եւ ղեկավարվել է միջգերատեսչական գիտական եւ մեթոդաբանական հանձնաժողովների կողմից, որոշ պնդումների համաձայն՝ այն ոչ միշտ է համապատասխանորեն պահպանվում: Օրինակ, մի շարք մասնագետներ (ինչպիսին է Յայկական ճարտարապետությունն ուսումնասիրող ՅՎ-ի նախագահ Սամվել Կարապետյանը) հաճախ են դժգոհում այն փաստից, որ բավարար գիտելիք չունենալով պատճառով վերակազմելու փորձերի ժամանակ գումարներ են մսխում, հուշարձաններ “փչացնում” :

Վերջին տարիներին քաղաքացիների շրջանում սոցիալական ակտիվության եւ պատասխանատվության զարգացման շնորհիվ ավելի ու ավելի մեծ թվով երիտասարդ ակտիվիստներ են ընդգրկվել մշակութային ժառանգության եւ հատկապես ճարտարապետական հուշարձանների պահպանության գործում, որոնք երբեմն գոհաբերվում են բիզնեսի պահանջներին: Բազում դեպքեր կան, երբ ճարտարապետական հուշարձանները պահպանվել են միայն հանրային ճնշման ներքո (օր.՝ Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճի դեպքը, որը հանվել էր պետության կողմից պահպանվող հուշարձանների ցանկից եւ որը քանդելու կառավարական կամ մեկ այլ որոշում դեռ չէր ընդունվել):

3.2.5. Վերականգնման ռեսուրսներ եւ կարողություններ

a. Թանգարանային ժառանգության վերականգնողների համար դասընթացների եւ մասնագիտական կրթական հաստատությունների ապահովումը, դրանց թիվը, տեսակները եւ արդյունքները:

Քանի որ Խորհրդային տարիներից հետո շատ փոփոխություններ են գրանցվել վերականգնման բնագավառում, Յայաստանի անկախ սերունդը շատ քիչ մասնագիտական փորձառություն եւ սահմանափակ ռեսուրսներ ունի: Այդ պատճառով թանգարանային եւ ժառանգության վերականգնողների մեծ մասը վերապատրաստվում է արտերկրում, ինչն այժմ ավելի ու ավելի հասանելի է միջազգային մակարդակում հասանելի տարբեր հնարավորությունների շնորհիվ:

2011թվականին Յայաստանի եւ Իտալիայի կառավարությունների միջեւ կնքվել է համաձայնագիր, որը նախատեսում է Մշակութային ժառանգության վերականգնման տարածաշրջանային կրթական կենտրոնի ստեղծում, ինչպես նաեւ տեխնիկական սարքավորումներ եւ մասնագիտական դասընթաց:

b. Համապատասխան ներկայացուցիչների (նախարարության պաշտոնյաներ, թանգարանների տնօրեններ, ժառանգության պլանավորողներ) ընկալմամբ որքանով են վերապատրաստում անցած վերականգնողները բավարարում իրենց նկատմամբ եղած պահանջարկը:

Միայն մի բան կարելի է ասել, որ վերապատրաստված վերականգնողների թիվը մեծ չէ, նաեւ բավական ֆինանսական աջակցություն չկա նրանց վերապատրաստման համար: Դա է պատճառը, որ Մշակույթի նախարարությունը ծրագրում է վերահաստատել նախկինում եղած վերականգնողների դպրոցը, ինչը դեռ ժամանակ եւ ներդրումներ կպահանջի:

c. Որքանով են վերականգնողների դասընթացները (օր. դրանց որակը, հասանելիությունը) հետաքրքրություն ներկայացնում շահագրգիռ կողմերի համար (օր.՝ Մշակույթի նախարարություն, թանգարանների տնօրեններ, ժառանգության պլանավորողներ):

Պետությունը մեծապես հետաքրքրված է վերականգնողների կրթության հարցով, Մշակույթի նախարարությունը աջակցել է մի քանի նման նախաձեռնությունների, օրինակ՝ ֆինանսավորել է որմնանկարների վերակազմողների վերապատրաստումը Իտալիայում, ովքեր հետագայում իրենց

իտալացի ուսուցիչների հետ մասնակցում էին Ճիրակի մարզում Մինասի հանրահայտ որմնանկարների վերականգնմանը:

3.2.6. Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության եւ խրախուսման մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան

a. Երկրում տեղեկացվածության մակարդակը (գնահատումը՝ համապատասխան մշակութային պլանավորողների եւ ավագ մասնագետների կոնկրետ հարցաշարի/հարցազրույցի մեթոդով):

Մասնագետների փոքր խմբի շրջանում անցկացված հարցումը ցույց տվեց, որ անգամ եթե նրանք տեղյակ են կոնվենցիայից, ապա հիմնականում այն, որ հաստատվել է Հայաստանի կողմից, բայց հիմնականում չգիտեն, թե ինչին է վերաբերում եւ ինչպես է գործում, նաեւ որովհետեւ մշակույթի ոլորտում իրենք ունեն ուշադրության արժանի ավելի կարելուր խնդիրներ:

b. Մշակույթի նախարարության նշած դեպքեր, որոնց պարագայում Կոնվենցիային միանալը ստիպել է նրանց վարվել այնպես, ինչպես չէին վարվի այլ դեպքում:

Նախարարությունը պնդում է, որ Կոնվենցիան արտահայտվում է իրենց գործունեության մեջ, եւ որ մշակութային բազմազանության պահպանումը իրենց առաջնահերթություններից մեկն է: Այն ակտիվորեն աջակցում Փոքրամասնությունների մշակութային փառատունին, նաեւ նրանց մշակութային ժառանգությանն ուղղված այլ քայլեր է ձեռնարկում:

c. Պաշտոնական փաստաթղթերում Կոնվենցիայի հիշատակության քանակը/աստիճանը

Նման տեղեկատվություն չի գտնվել:

3.3. Մշակույթի ապահովում/ուսումնասիրություն/մասնագիտական դասընթացներ եւ փոխանցում/տարածում/կապի հասանելիություն /թվայնացում

3.3.1. Ընդհանուր միջավայր

a. Արվեստի ուսումնասիրությամբ զբաղվող հաստատությունների, կազմակերպությունների թիվը, տեսակները, չափը եւ ցանկը:

Հայաստանում հետազոտական հիմնական կենտրոններն են Գիտությունների ակադեմիայի Գրականության եւ Արվեստի մասնագիտացած ինստիտուտները, Մատենադարանը (որ հիմնականում գործ ունի ձեռագրերի հետ), Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամը, Ազգային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը, Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը, եւ իհարկե թանգարաններն ու որոշ գրադարաններ:

b. Կոնկրետ ներկայացուցչական հարցազրույցի մեթոդով արվեստի եւ մշակույթի քննադատության ու քննարկումների գնահատում երիտասարդ (մինչեւ 35 տարեկան) մասնագետների կողմից:

Մի կողմից ընկալումները բավական աղքատիկ են, եթե նկատի ունենանք իշխանությունների կողմից երիտասարդ արվեստագետների եւ կատարողների աշխատանքի նկատմամբ արձագանքն ու դրա ընկալումը (թեեւ երիտասարդները մշտապես գովասանքի են արժանանում): Մյուս կողմից մշակույթի երիտասարդ մասնագետները սովորաբար կարողանում են գտնել նույնանման մտածողների շրջանակ, որտեղ մեծ է հետաքրքրությունը իրենց գործունեության նկատմամբ: Դժբախտաբար այդ շրջանակները թեեւ համեմատաբար մասնագիտական, հասուն ու արձագանքող են, բայցեւ շատ նեղ եւ ինքնամփոփ են:

Նորագույն տեխնոլոգիաների ու մեդիաների վերջին զարգացումների եւ ամենուր տարածված ինտերնետ հասանելիության շնորհիվ այժմ հնարավոր է գոնե առցանց քննարկում ծավալել արվեստի եւ մշակույթի շուրջ: Բայց դա վերաբերում է մշակութային ակտիվիստների եւ արվեստով զբաղվողների մի փոքր համայնքին միայն, ովքեր հիմնականում ճանաչում են միմյանց եւ իրենց “անքուն գիշերները” նվիրում են սոցիալական ցանցերում (հատկապես Facebook-ում) ծավալվող տարբեր թեժ թեմաներին: Երբեմն նմանատիպ փոքր առցանց հավաքները վերածվում են իրական հանդիպումների կամ հանրային միջոցառումների՝ քննարկումներ, դասախոսություններ կամ հետազոտական զեկուլցներ: Բայց սա վերաբերում է միայն նրանց, ովքեր պատահմամբ ծանոթանում են նշված համայնքին, այսինքն՝ արտաքինից դա չի կարող համարվել հարուստ մշակութային միջավայր: .

Թեեւ մեկ պատահական կարծիքի անդրադառնալը վտանգներ է պարունակում, բայց որպես հետազոտության ընթացքում մեջբերված “դրսի” հայացք՝ կարելի է նշել մի լեհ համադրողի օրինակը, ով ծրագրված մի ցուցահանդեսի համար ժամանակակից հայ արվեստագետի բացահայտելու համար եկել էր Չայաստան եւ չկարողանալով ճիշտ “հետք գտնել” պարզապես հետ էր վերադարձել այն տպավորությամբ, որ սա “խորհրդային” մի երկիր է, որտեղ մշակութային որեւէ նորություն չկա:

3.3.2. Մասնագիտական դասընթացներ

a. Մշակույթի եւ Կրթության նախարարությունների տեղեկատվության համաձայն՝ արվեստի եւ մշակույթի մասնագիտական կրթության ապահովման եւ որակի մակարդակը:

Այստեղ նույնպես կիրառելի է “խորհրդային” տերմինը եւ անցյալի ազդեցությունը, քանի որ արվեստի համալսարանների մեծ մասում դեռ մեծ ճեղքվածք կա դասախոսների եւ ուսանողների միջեւ, որը վերաբերում է ոչ միայն սերունդների հեռավորությանը, այլեւ հիմնականում մտածողության, կյանքի տեմպի եւ նորարարության նկատմամբ ունեցած մոտեցումների տարբերություններին: Իհարկե ավագ սերնդի շարքերում կան նաեւ անփոխարինելի մասնագետներ, սակայն հիմնական մթնոլորտը եւ ամբողջ ադմինիստրատիվ կառույցը “թաղված են փոշու” մեջ: Եւ նույնիսկ գիտակցելով այս իրավիճակը՝ ուսանողների մեծամասնությունն այլ ընտրություն չունի, նրանցից միայն մի քանիսն են կարողանում ճեղքել պատնեշն ու վերապատրաստվել կամ կրթությունը շարունակել արտերկրում, ինչը ենթադրում է մեկ այլ վտանգ, որ նրանք չեն ցանկանում այլեւս վերադառնալ Չայաստան:

b. Այս ոլորտում Էրասմուսի նման միջազգային կապերի թիվը:

Հիմնական խնդիրը համապատասխան մասնագետների պակասն է, բայց նաեւ կրթական համակարգը, ֆինանսական ռեսուրսների սղությունը եւ մշակույթի նկատմամբ ընդհանուր անտարբերությունը, որին վերաբերվում են որպես դեկորատիվ տարրի:

3.3.3. Ինտերնետի օգտագործում եւ կապի հասանելիություն

a. Որեւէ հայտնի վիճակագրություն ինտերնետի օգտագործման եւ կապի հասանելիության վերաբերյալ:

Ջեռահադորդակցության միջազգային միության (ITU) տվյալների համաձայն՝ 2010 թվականին Չայաստանի հասարակության 37%-ն օգտագործում էր ինտերնետ: Չայկական տեղական աղբյուրներից մեկի հաղորդմամբ՝ 2011-ի ընթացքում վարչապետն իր ելույթներից մեկի ժամանակ նշել է 1.5 միլիոն ինտերնետ օգտագործողների մասին, որը հասարակության մոտ կեսն է:

b. Կապի ծառայությունների գները տեղական եկամուտի համեմատ

- տանը
- ինտերնետային սրճարան այցելելիս:

Այժմ ամենաօգտագործվող ինտերնետային կապերից մեկը UCOM-ն է, որը տրամադրում է նաեւ լարային հեռախոս եւ թվային հեռուստատեսություն ամսական 15,000 դրամով (մոտ 30 Եվրո): Բայց

դա միակը չէ. մյուսներն օգտագործում են այլ ծառայություններ՝ վճարելով ամսական 6,000-12,000 դրամ (մոտ 12-24 եվրո): Այժմ մարդկանց մեծամասնությունը ձգտում է ինտերնետին միացված լինել տանից կամ գոնե շարժական սարքերից: Ինտերնետի օգտագործումը բավական տարածված է, օրինակ՝ անգամ գյուղական վայրերում մեծահասակները հաճախ օգտվում են Skype-ից, անգամ եթե միանում են մեկ ուրիշի բնակարանից:

c. Որեւէ վիճակագրություն կապի հասանելիության աճի վերաբերյալ:

Ըստ ՅՄՄ-ի (ITU) ավելի վաղ մի վիճակագրության՝ 2007-ին եւ 2008-ին ինտերնետ օգտագործողների թիվը կազմում էր հասարակության միայն 6%-ը, որը հասել է 37%-ի 2010-ին:

d. Որեւէ վիճակագրություն, տեղեկատվություն կամ հումորային վկայություն «թվային բաժանման» վերաբերյալ (օր.՝ հարուստ-աղքատ, քաղաք-գյուղ եւ այլ տարբերությունները):

Իրականում այսօր Հայաստանում գոյություն չունի «թվային բաժանում», քանի որ անգամ գյուղական վայրերում մարդիկ գնում են համակարգիչներ, որպեսզի կապ հաստատեն արտերկրում կամ հեռավոր վայրերում բնակվող ու աշխատող իրենց բարեկամների հետ: Կապի հիմնակա միջոցը Skype-ն է կամ Facebook-ի եւ Odnoklassniki.ru-ի նման սոցիալական ցանցերը:

e. Որեւէ վիճակագրություն, գնահատականներ կամ հետազոտություն մշակույթի ոլորտում ինտերնետի օգտագործման միտումների վերաբերյալ:

Որպես հաղորդակցության եւ մեդիայի նոր գործիք՝ ինտերնետը դարձել է աշխարհին եւ զարգացմանը միացնող սակավաթիվ բաց պատուհաններից մեկը: Մյուս կողմից ինտերնետը մարդկանց հնարավորություն է տվել զգալ ընտրության եւ ինքնարտահայտման ազատությունը՝ դառնալով մի տեսակ կազմակերպչական հիմք քաղաքացիական հասարակության համար: Կարելի է ասել, որ Հայաստանն ապրում է առցանց քաղաքացիական հասարակության ձեւավորման փորձառություն:

3.3.4. Թվայնացման նախագծեր

a. Պետական աջակցությամբ իրականացվող թվայնացման նախագծերի բացատրական ցանկը (օր.՝ ազգային էլեկտրոնային գրադարանի ստեղծում, ազգային թանգարանի հավաքածուների թվայնացում, ազգային հավաքածուների կամ արխիվների հիման վրա կազմակերպվող վիրտուալ ցուցահանդեսներ եւ այլն):

Թվայնացման գործընթացը մեկնարկեց նախ տարբեր մշակութային հաստատությունների՝ օրինակ թանգարանների, թատրոնների, առցանց ներկայության ապահովմամբ, սակայն նույնիսկ այդ դեպքում խոսքը ոչ թե թանգարանի հավաքածուների թվայնացման մասին էր, այլ տեղեկատվության եւ պատկերների: Ավելի ուշ մեկնարկեցին վիրտուալ թանգարանների որոշ նախագծեր, օրինակ՝ Ցեղասպանության թանգարանը (<http://www.genocide-museum.am/eng/index.php>):

Թվայնացման այլ նախագծերի շարքում անհրաժեշտ է նշել Հայաստանի գրադարանների համահավաք առցանց գրացուցակի ստեղծումը (<http://www.armunicat.am:8991>):

Քանի որ ողջ երկրում առաջիկա նախագծերը դեռ անորոշ են, Մշակույթի նախարարությունը միայն սահմանափակ տեղեկություններ կարողացավ տրամադրել թվայնացման գործընթացների վերաբերյալ: Մասնավորապես նշվեց 2012-ին ստեղծված Գրքի վիրտուալ թանգարանը եւ Գորգի վիրտուալ թանգարանի մոտակա մեկնարկը:

3.4. Հասանելիություն եւ կրթություն

3.4.1. Հասանելիություն

a. Պաշտոնական մակարդակում մշակույթի հասանելիության վերաբերյալ որեւէ քաղաքականության կամ քննարկման վկայություն (օր.՝ մշակութային իրավունքների, արվեստի եւ մշակութային իրադարձությունների մուտքի ու տոմսերի վերաբերյալ եւ այլն):

Մշակույթի հասանելիության մասին խոսելիս պետք է նշել, որ մշակութային մեծ իրադարձությունները՝ համերգներ, պրեմիերաներ ու այլն, մեծամասամբ հասանելի չեն հասարակ մարդկանց համար, քանի որ բավական թանկ արժեն, հատկապես երբ իրականացվում են կոմերցիոն հիմունքներով: Մյուս կողմից մշտապես շատ դժվար է խելամիտ գներով տոմսեր գտնել, եթե բավական շուտ չես գնում, քանի որ դրանք շատ արագ են սպառվում:

Մեկ այլ կարեւոր խնդիր է հարմարավետ մշակութային հաստատությունների հարցը, քանի որ դրանք հիմնականում չափազանց փոքր են նույնիսկ Հայաստանի փոքրաթիվ բնակչության համար: Միջազգային չափանիշներով հանրային միջոցառումների (օրինակ՝ նրանց, որ ուղղակի կամ անուղղակի կերպով ֆինանսավորվում են Մշակույթի նախարարության կողմից) տոմսերի գները ցածր են:

b. Արվեստի ու մշակույթի հասանելիության ապահովման խնդիրները՝ ներկայացված մշակույթի մասնագետների օրինակներում: Խնդիրների շարքում կարող են լինել ապահովման պակասը, գները, հետաքրքրության բացակայությունը, վատ մարկետինգը, քաղաք-գյուղ բաժանման հարցը, ոչ ճիշտ ծրագրավորումը հիմնական վայրերում, ոչ հարմար ժամային քաղաքականությունը ու այլն):

Կարիքների առումով նախ պետք է նշել հանրային վայրերի պակասը գյուղական վայրերում, որոնք կարող են ծառայել մարդկանց որպես մշակույթի հետ շփման առաջին հարթակ՝ նրանց դարձնելով մասնակից: Հանրային մշակութային վայրերի անբավարարության այս կարեւոր գործոնը հավանաբար միայն իշխանություններից չէ կախված, ովքեր չեն զբաղվում մասնակցության եւ հասանելիության խնդիրներով, բայց եթե նրանք առաջնորդող դեր ստանձնեին նման նախաձեռնություններում, այս ոլորտում հնարավոր էր հասնել կատալիզատորի ազդեցության:

“Ոչ նորածեւ” (այսինքն դեռ Խորհրդային) մտածողությունը մեծ խոչընդոտներ է ստեղծում մշակութային զարգացման համար ու հիասթափեցնում ոչ սակավաթիվ քանակի քաղաքացիների, ովքեր տեղյակ են մշակութային ժամանակակից հարցերից, միտումներից եւ հնարավորություններից:

3.4.2. Կրթություն

a. Հիմնական դպրոցի ուսումնական ծրագրում արվեստի կրթության որեւէ ձևի մասին վկայություն:

Երբեմն տպավորություն է ստեղծվում, որ արվեստի կրթությունը համեմատաբար նորմալ վիճակում է, բայց իրականում դա մշակույթի ոլորտի թույլ կողմերից մեկն է, որը նաեւ հետագա խնդիրների հիմքն է: Արվեստը համարվում է դպրոցական ծրագրի մաս, բայց հայկական դպրոցներում այս ուղղությամբ դեռ կիրառվում է “Խորհրդային” մոտեցումը: Գործնականում դա նշանակում է, որ ցածր դասարաններում աշակերտները երաժշտության, իսկ ավելի հաճախ երգեցողության դասեր են անցնում, որոշակի քանակությամբ նկարչության դասերին են “զբաղվում”, լավագույն դեպքում աղջիկներին սովորեցնում են ասեղնագործել կամ ճաշեր պատրաստել: Ոչ արվեստի պատմությունը, ոչ էլ որեւէ այլ մշակութային առարկա, որ կարող է համարվել արվեստի կրթություն, հիմնական կրթական ծրագրի մաս չի կազմում՝ բացառությամբ տարբեր պատմության դասագրքերում տեղ գտած մի քանի հոդվածների, որ վերաբերում են Հայաստանի մշակույթին եւ այլ երկրների պատմությանը:

b. Դպրոցական բնորոշ միջավայրում արվեստի որեւէ գործունեության օրինակներ:

Արվեստի/մշակութային կրթության շուրջ հիմնական բանավեճը այն արդարացված ընկալման շուրջ է, որ ժամանակակից խնդիրներով ու զարգացումներով զբաղվող մասնագետների պակաս կա: Մշակույթի նախարարությունն իր հերթին վաղուց պնդում է համապատասխան նոր սերնդի անհրաժեշտության մասին՝ իրենց նոր մոտեցումներով ու գաղափարներով: Որոշ քայլեր ձեռնարկվել են արվեստի մասնագետների՝ արտերկրում վերապատրաստում անցնելու կամ տեղում այլազգի ուսուցանողների մասնակցությամբ դասընթացներ կազմակերպելու ուղղությամբ, բայց այս խնդիրն անհրաժեշտ է անդրադառնալ ավելի հիմնավոր կերպով եւ համապատասխան ֆինանսական աջակցությամբ: Միայն 2011-ին Տեմպուս ծրագրի շրջանակներում մշակույթի կառավարման փորձնական ծրագիր է մեկնարկել Գեղարվեստի պետական ակադեմիայում:

Երեխաների համար արվեստի կրթությունն ապահովելու հարցը կախված է ծնողների նախաձեռնությունից: Մի շարք ծնողներ ձգտում են իրենց երեխաներին տանել երաժշտական կամ նկարչական դպրոցներ, պարի կամ երգեցողության դասերի, բայց սա միայն անձնական ցանկության, ֆինանսական միջոցների եւ աշխատանքային օրակարգի հետ հասցնելու հարց է: Եվ անգամ արվեստի պետական դպրոցներում նմանատիպ ծառայությունների դիմաց ծնողները մեծամասամբ ստիպված են վճարել, անձամբ ապահովել գործիքները, այն դեպքում երբ հաստատությունների կենսապայմանները բավարար չեն եւ այլն: Միայն վերջերս են ի հայտ եկել նոր նախաձեռնություններ երեխաների համար, օրինակ՝ մանկական անվճար կրթական ծրագիրը Գաֆեսեան արվեստի կենտրոնում կամ նորակառույց “Նորաձեւ” արվեստի կենտրոնները, որտեղ գները բարձր են, եւ նրանց ծառայությունները հասանելի չեն մեծամասնության համար:

Այդուհանդերձ, Մշակույթի նախարարությունը նախաձեռնել է աջակցել է մշակութային կրթության ծրագրերի: Արդեն նշվել է Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի մասին, որը հիմնվել է 2008 թվականին եւ ներկայություն ունի Երեւանում եւ տասը մարզերում: 2008-2011 թվականների ընթացքում 19.000 աշակերտ եւ 3.930 ուսուցիչ է մասնակցել “Ուսուցում եւ մեթոդաբանական աջակցություն” ծրագրին: Նույն շրջանում 1.570 աշակերտ եւ 1.730 ուսուցիչ ընդգրկվել է “Վարպետության դասեր” ծրագրում եւ այլն:

Նախարարության մեկնաբանությամբ՝ 2009-2010 թվականներին միասնական կրթական ծրագրեր են մշակվել երաժշտական, արվեստի եւ գեղարվեստի դպրոցների համար, ինչպես նաեւ՝ մոտ 17 կարգապահական ծրագրեր: 2011-ին հաստատվել են դասընթացների տիպային ծրագրերը երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ պարարվեստի դպրոցների համար: 2008-ից ստեղծված Երեւանի եւ մարզերի (յուրաքանչյուրում՝ 3) 33 “պիլոտային” դպրոցներ իրենց գործունեությունը շարունակեցին ուսումնա-մեթոդական աշխատանքի ավելի արդյունավետ կազմակերպմամբ: 2008 թվականից գումարներ են հատկացվում երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ պարարվեստի դպրոցներում ուսումնամեթոդական գործունեության, կրթական ծրագրերի, դասագրքերի եւ մեթոդաբանական ձեռնարկների մշակման եւ տպագրության համար: Այս նախագիծը մասնագետները գնահատել են որպես շատ արդյունավետ: Դրան աջակցում էր հատուկ այդ նպատակով նախարարությանը կից ստեղծված մասնագիտական հանձնաժողովը: Երեխաների համար երաժշտական կրթության հասանելիությունը բարելավելու նպատակով Կառավարությունը հաստատել է “Յայաստանի երաժշտական եւ արվեստի դպրոցներում ժողովրդական նվագարանների դասընթացների վարձավճարների փոխհատուցման” ծրագիրը: 2011 թվականին կային 144 դպրոցներ ներկայացնող 2443 սովորողներ՝ ժողովրդական (2004), լարային (164) եւ փողային (275) գործիքների: Նախարարության աջակցությամբ եւ մասնագիտական ընտրությամբ մի շարք տաղանդավոր երեխաներ եւ պատանիներ մասնակցել են միջազգային հեղինակավոր մրցույթների, փառատոների եւ դասընթացների (2008-ին՝ 55, 2009-ին՝ 59, 2010-ին՝ 96, եւ համապատասխանաբար 41՝ 2011-ին): 2010 թվականից Մշակույթի նախարարության աջակցությամբ “Արվեստի կրթություն” ծրագրի շրջանակներում թողարկվել է “Արվեստի կրթությունը Յայաստանում. ստեղծագործ ներուժի զարգացման հեռանկարները 21-րդ դարում” գեկույցը, իսկ 2011 թվականից նույն ծրագրի շրջանակներում մեկնարկվել է տվյալների բազայի ստեղծումը: 2012-ից սկսած՝ յուրաքանչյուր տարվա մայիսի վերջին շաբաթը սահմանված է որպես “Արվեստի կրթության շաբաթ”:

3.5. Մասնակցությունն եւ հանդիսատեսի զարգացում

3.5.1. Մասնակցության վիճակագրություն

a. Արվեստի ու մշակույթի ոլորտում մասնակցության որեւէ վիճակագրություն` (կինո)թատրոններ այցելություններից մինչեւ մշակութային ակումբներ եւ այլն:

Մշակութային ամենաբարձր մասնակցությունը այցելություններն են երաժշտական միջոցառումների, ֆիլմերի, թատերական ներկայացումների, ավելի պակաս հետաքրքրությունն է գրանցվում կերպարվեստի, գրական միջոցառումների նկատմամբ եւ այլն:

Քիչ թե շատ զարգացած է նաեւ ակումբային կյանքը, բայց այցելուների շատ յուրահատուկ շրջանակով. դրանք հիմնականում ակումբի էլիտան են` կապված կոնկրետ միջոցառումների հետ, տնօրինության հետ կապեր ունեցողները կամ մինչեւ 35 տարեկան երիտասարդները, ովքեր բարձր են գնահատում երաժշտական ակումբների փորձառությունը:

b. Մասնակցության միտումների օրինակներ, օր.՝ մշակույթի ոլորտի տարբեր միջոցառումների այցելությունների նկատելի աճ կամ հրաժարում դրանցից:

Վերջին տարիներին կինոարվեստի նկատմամբ հետաքրքրության նկատելի աճ է գրանցվել, չնայած այն փաստին, որ Երեւանում գործում է ընդամենը մեկուկես կինոթատրոն: Ավելի ու ավելի շատ մարդիկ են ձգտում մասնակցել հանրային կինոդիտումների, որոնք կայանում են օրինակ, որեւէ միջոցառման շրջանակներում, որեւէ ակումբում կամ բացօթյա ցուցադրություններում: Եվ սա նաեւ այն պատճառով, որ ֆիլմարտադրության ամենաթարմ տեղեկատվությունը շատ արագ է հասնում մարդկանց եւ ստիպում նրանց հետաքրքրվել եւ հետեւել զարգացումներին: Ոգեւորության աղբյուր են նաեւ ժամանցի նոր միջոցները, ինչպիսին է օրինակ եռաչափ պատկերը:

Պետք է նշել նաեւ, որ բացի հանրահայտ կոմերցիոն մասսայական երաժշտությունից, հանրության շրջանում իրական հետաքրքրություն կա լուրջ երաժշտության նկատմամբ` այդ թվում, դասական, ռոք, ջազ, եւ այլն: Երբ հնարավորություն է լինում նշված ոճերի որեւէ անվանի ներկայացուցչի կենդանի համերգի, անգամ ամենամեծ դահլիճները շատ արագ սպառում են տոմսերը:

Կարելի է նշել նաեւ, որ աճող հետաքրքրություն կա նաեւ տարբեր տեսակի կատարողական արվեստների բացօթյա ներկայացումների հանդեպ, որոնք ավելի հաճախ են գործածում մասնակցային տարրեր` այդ կերպ միջոցառումները դարձնելով ավելի ինտերակտիվ եւ գրավիչ: Այս գործընթացին նպաստեց արտերկրից Հայաստան բերված ժամանակակից ներկայացումների հոսքը, որոնք ոգեշնչեցին տեղացի երիտասարդներին եւ ընդհանրապես հանդիսատեսին դարձրեցին ավելի բաց` արտիստիկ նորորարություններ ընկալելու համար: Այժմ մեծ է հետաքրքրությունը բացօթյա ներկայացումների նկատմամբ, որոնցում հանդիսատեսն իր դերն ունի: Բայց խոսքը դեռ միայն Երեւանի մասին է, այն էլ քաղաքի կենտրոնական հատվածի, բայց այդուհանդերձ հետաքրքիր միտում է:

Մշակութային մասնակցության շուրջ քննարկումները շատ չեն, եթե անգամ կան, ապա հիմնականում հենց մասնակիցների կամ լրատվամիջոցների շրջանում:

3.5.2. Հանդիսատեսի զարգացում

Հանդիսատեսի զարգացման կամ լուսաբանող ծրագրերի վիճակագրություն, օրինակ` որպես թատրոնների, թանգարանների, փառատոների հիմնական գործունեության մաս, նաեւ պատկերացում այն մասին, թե որքանով է զարգացած այս երեւույթը:

Հնարավոր չէ խոսել պետության կողմից հանդիսատեսի զարգացման հատուկ մոտեցման մասին, քանի որ հիմնական շեշտը դրվում է միջոցառումների կազմակերպման վրա` որպես մշակութային

քաղաքականության մաս, նաեւ պարզապէս փորձ է արվում հնարավորության սահմաններում հետաքրքրել ու ակտիվացնել մարդկանց:

Ինչ վերաբերում է տարբեր մշակութային հաստատություններին՝ թանգարաններ, թատրոններ եւ այլն, կան որոշ օրինակներ, որոնք կարելի է համարել լուսաբանող ծրագրեր: Օրինակ փառատոները ձգտում են հանդիսատեսին հասնել հենց փողոցներում եւ մարդկանց մասնակցության բազում հնարավորություններ են առաջարկում: Ոսկէ Ծիրան կինոփառատոնը ցուցադրություններ է կազմակերպում նաեւ փառատոնային հիմնական տարածքից դուրս, օրինակ՝ փոքր համալսարանական կամ բացօթյա եկրաններին: ՀայՖեստ փառատոնը սիրում է ներգրավել փողոցային թատերական խմբեր, որոնք կապի մեջ են մտնում երեւանցիների հետ: Որոշ առանձին թանգարաններ նույնպէս սկսել են զարգացնել իրենց հանդիսատեսին՝ կազմակերպելով հատուկ միջոցառումներ, կրթական ծրագրեր (օր.՝ Հայաստանի ազգային պատկերասրահը, Գաֆէսճեան արվեստի կենտրոնը եւ այլն):

4. ՏՄԿԶԿ հետազոտական այցի հիմնական արդյունքները

Յուրաքանչյուր երկրում Մշակութային ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերի հետ կապեր հաստատելու եւ ազգային ու տարածաշրջանային մակարդակներում ամրապնդման արժանի մշակութային քաղաքականության առանձնահատուկ ոլորտների բացահայտման գործընթացը սկսելու համար 2011-ի հոկտեմբերի 29-ից ՏՄԿԶԿ-ը հետազոտական այցեր իրականացրեց դեպի Ադրբեջան, Բելառուս, Չայաստան, Մոլդովա, Վրաստան եւ Ուկրաինա: Դաշտային աշխատանքը ներառեց կլոր-սեղան քննարկումներ կառավարության եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, մշակույթի ոլորտի հիմնական դերակատարների հետ, Ծրագրի ներկայացումներ եւ նախնական տվյալների հավաքագրում Արեւելյան Գործընկերության երկրների մշակութային քաղաքականությունների հիմնարար ուսումնասիրության համար: Այցերի արդյունքները եւ հետագա ուսումնասիրությունները հիմք դարձան բացահայտված առաջնային ոլորտներում ՏՄԿԶԿ-ի կողմից 2012-ից մինչեւ 2015-ի մարտ նախատեսված կարողությունների զարգացման առաջարկների համար:

Չայաստան ՏՄԿԶԿ-ը այցելեց 2011-ի նոյեմբերի 9-11-ը, փորձագետների խմբի կազմում էին ղեկավար պրն. Լուչիանո Գլուրը, կարողությունների զարգացման փորձագետ տկն. Տետյանա Բիլեցկան, տեղեկատվության եւ հաղորդակցության ղեկավար տկն. Ելենա Պալիվոդան, նախագծի եւ մոնիթորինգի ղեկավար տկն. Օքսանա Մուզիչուկը:

Այցի ընթացքում հանդիպումներ, հարցազրույցներ կայացան եւ կապեր հաստատվեցին ԱԳ մշակութային ծրագրի ավելի քան 70 տեղացի դերակատարների հետ՝ հասարակական եւ մասնավոր ոլորտներից, ինչպես նաեւ ԵՄ պատվիրակության եւ Չայաստանում ակտիվ գործունեություն ծավալող դոկոր կազմակերպությունների հետ:

Տեղական իշխանությունները մեծ հետաքրքրություն արտահայտեցին Արեւելյան Գործընկերության մշակութային ծրագրի նկատմամբ. մասնավորապես Մշակույթի նախարարությունը ակտիվ աջակցություն ցուցաբերեց այցի կազմակերպման գործում: Առանձին աշխատանքային հանդիպում կազմակերպվեց Չայաստանի Արտաքին գործերի նախարարության հետ:

Այցի գլխավոր իրադարձությունը կլոր-սեղան քննարկումն էր ոլորտի հիմնական դերակատարների հետ, որ վերաբերում էր մշակութային քաղաքականության բարեփոխումների կարիքներին ու առաջնահերթություններին: Մշակույթի նախարարության եւ ԵՄ պատվիրակության աջակցությամբ ՏՄԿԶԿ-ի կազմակերպած կլոր-սեղանին մասնակցեց ավելի քան 50 մարդ: Քննարկումը հնարավորություն ընձեռեց տեղեկատվություն փոխանցել Արեւելյան Գործընկերության մշակութային ծրագրի վերաբերյալ, քննարկել մշակույթի ոլորտի՝ բարեփոխման ու ամրապնդման արժանի կարիքներն ու առաջնահերթությունները: Դա նաեւ հեշտացրեց տարածաշրջանային եւ ազգային մշակութային նախագծերի եւ նախաձեռնությունների շուրջ գիտելիքներ փոխանակումը պետական իշխանությունների, ԵՄ պատվիրակության, ՅԿ-ների, հետազոտական եւ ակադեմիական ինստիտուտների, ինչպես նաեւ համապատասխան նախագծերի եւ նախաձեռնությունների, ազգային եւ տեղական թանգարանների, պատկերասրահների, հիմնադրամների, մասնագիտական ասոցիացիաների եւ միությունների, մշակութային արտադրությունների ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջեւ:

Միջոցառումը համատեղ վարում էր նաեւ մշակույթի փոխնախարար Արեւ Սամուելյանը, ով բազմիցս շեշտեց ցանցային համագործակցության համար քննադատության, կլոր-սեղան քննարկում ձեւաչափի արդյունավետության, ինչպես նաեւ նոր ծրագրերի հիմնման եւ պետական ու մասնավոր հատվածների համագործակցության անհրաժեշտության մասին: Նախարարության դիտարկմամբ՝ բարեփոխումների հաջողության կարեւոր պայման է պետական իշխանությունների եւ մշակութային անկախ գործիչների ակտիվ համագործակցությունը:

Չայաստանում ԵՄ պատվիրակությունը կլոր-սեղան քննարկման ժամանակ հայտարարեց հայ

գլխավոր գործընկերների կողմից ղեկավարվող երեք նախագծերը (որոնք համաձայնագիր են ստորագրել Պատվիրակության հետ):

ՏՄԿԶԿ-ը ներկայացրեց Արեւելյան Գործընկերության Մշակութային ծրագիրը՝ ներառյալ նպատակները, խնդիրները եւ հիմնական բաղադրիչները: Հատուկ ուշադրություն հրավիրվեց ՏՄԿԶԿ-ի միջոցների եւ աշխատանքային գործիքների նկատմամբ, որոնք օգտագործվելու են նախագծի իրագործման ընթացքում:

- Հետազոտական գործընթաց *Մշակութային քաղաքականության ուսումնասիրություն* եւ *հետազոտություն* գործողության շրջանակներում,
- Կարողությունների զարգացման տարածաշրջանային նախաձեռնություններ՝ մասնավորապես մշակութային քաղաքականությանը նվիրված փոխանակման դասընթացներ, որոնք ՏՄԿԶԿ-ի կողմից կկազմակերպվեն 2013-2014 թվականներին,
- Աջակցություն ԱԳ Մշակութային ծրագրի կողմից դրամաշնորհի արժանացած ծրագրերին դրանց իրականացման ընթացքում,
- Հաղորդակցություն եւ ցանցային համագործակցություն՝ ապահովելով տեսանելիություն եւ տարածելով ծրագրի արդյունքները:

Մասնակիցները նաեւ տեղեկացան, որ ազգային իշխանությունները հնարավորություն ունեն երկրին բնորոշ հատուկ տեխնիկական աջակցություն ստանալ մշակութային քաղաքականության եւ իրավական բարեփոխումների հարցերում ՏՄԿԶԿ-ի *Տեխնիկական աջակցություն Արեւելյան Գործընկերության իշխանություններին* գործողության շրջանակներում:

Տեղացի դերակատարներին առաջարկվեց արտահայտել իրենց հետաքրքրությունը՝ մասնակցելու *ԱԳ Մշակութային ծրագրի խորհրդատվական կոմիտեի* աշխատանքին:

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց մշակույթի ոլորտում բարեփոխման եւ ամրապնդման արժանի հիմնական կարիքներին եւ առաջնահերթություններին, ինչպես նաեւ քաղաքականությանն առնչվող ազգային եւ տարածաշրջանային նախաձեռնություններին եւ տարբեր ԵՄ ու միջազգային ծրագրերին, որ վերաբերում են այնպիսի ոլորտների, ինչպիսիք են մշակույթը, կրթությունը եւ մարդկային զարգացումը:

Մշակույթի նախարարությունն այլ հարցերի շարքում ուշադրության արժանացրեց հետեւյալ թեմաներն ու օգնության ձեւերը, որոնց հարցում ակնկալում են Մշակութային ծրագրի եւ ընդհանրապես ԵՄ աջակցությունը՝ ի պատասխան տարածաշրջանում մշակութային առաջնահերթ կարիքների.

- կապ հաստատել տնտեսության, զբոսաշրջության եւ մշակույթի միջեւ՝ զարգացնելով համապատասխան ցուցիչներ
- բացել ԵՄ Մշակութային ծրագիրը ԱԳ երկրների համար՝ ներառյալ լեզվական բազմազանությանն ու թարգմանություններին վերաբերող նախագծերի շեմերը
- զարգացնել համագործակցությունը ԱԳ չորրորդ պլատֆորմի շրջանակներում՝ "Շփումներ մարդկանց միջեւ"
- ԱԳ Մշակութային ծրագրի շրջանակներում աջակցել *Կիելյան նախաձեռնություն* տարածաշրջանային ծրագրին, ինչպես նաեւ *Պատմական քաղաքներում մշակութային ժառանգության վերականգնման փորձնական նախագծին*:

Նախարարությունն առաջարկեց Մշակութային ծրագրի աջակցությամբ կազմակերպել երկու տարածաշրջանային/միջազգային իրադարձություն.

- համաժողով՝ նվիրված ազգային ժառանգության դերին տարածաշրջանային հաշտեցման գործում (ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցությամբ)

- միջազգային փորձագետների մասնակցությամբ տարածաշրջանային միջոցառում՝ նվիրված մշակութային զարգացման չափանիշներին և ցուցիչներին, ինչպես նաև մշակութային ներկայացուցչականության արդյունավետ մոդելներին:

Մշակույթի նախարարությունը դիմեց նաև Մշակութային ծրագրի տեխնիկական աջակցությանը՝ մասնավորապես փորձագետների կողմից նոր օրենսդրական նախագծերի գնահատմանը:

Կլոր-սեղան քննարկման մասնակիցները շեշտեցին տարածաշրջանում ակտիվ գործունեություն ծավալող և քաղաքականության բարեփոխումների ու կարողությունների զարգացման գործում ներգրավված բոլոր դոնորների ջանքերը համակարգելու մեծ կարևորությունը: Տեղացի դերակատարների կարծիքով՝ դա կօգնի խուսափել կրկնվող գործողություններից և կենտրոնացնել ԱԳ երկրներում մշակութային բարեփոխումներին ուղղված ռեսուրսները, միջոցներն ու հնարավորությունները հանուն վերջնական նպատակ դիտարկվող էական արդյունքների: ԱԳ երկրներում մշակութային համագործակցությանն ու կարողությունների զարգացման ծրագրերին/նախագծերին աջակցող բազմաթիվ դոնորների շարքում հայաստանցի դերակատարներն ամենից շատ նշեցին ՅՈՒՆԵՍԿՕ-ն և Եվրախորհուրդը:

ՏՄԿԶԿ կլոր-սեղանի և աշխատանքային հանդիպումների մասնակիցները նաև կարծիքներ հայտնեցին Մշակութային ծրագրի հաջողության ամենակարեւոր գործոնների և նախապայմանների, ինչպես նաև տեղացի դերակատարների շրջանում սեփականության զգացման վերաբերյալ: Հայաստանցի դերակատարների նշած խնդիրները հետեւյալն են.

- ապահովել առավելագույն թափանցիկություն հնարավորությունների և որոշումների կայացման հարցում՝ ներառյալ ՏՄԿԶԿ-ի միջոցառումների համար մասնակիցների ընտրությունը
- ԱԳ Մշակութային ծրագրի պլանավորման և իրականացման համար հաշվի առնել տարածաշրջանային համագործակցության արդեն իրագործված նախագծերի փորձը, քաղած դասերն ու արդյունքները, օր.
 - o ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ֆինանսավորված նախագծերն ու ծրագրերը
 - o Արեւելյան Գործընկերության հինգ երկրներ ներառող Կիւեյան նախաձեռնություն տարածաշրջանային ծրագիրը
- հատուկ ուշադրություն դարձնել ժառանգությանը վերաբերող խնդիրներին (պահպանություն, արդիական կառավարում և օգտագործում հանուն տեղական զարգացման և այլն):

Թեև բոլոր տեղացի շահագրգիռ կողմերն ընդունում են ԱԳ վեց երկրների մշակութային իրավիճակների ու դրանից ծագող խնդիրների նմանությունները, նաև ձգտում են ծանոթանալ հարեւան պետությունների լավագույն փորձին և ԵՄ անդամ երկրների քաղաքականության գործիքներին, այդուհանդերձ պնդում են, որ անհրաժեշտ է ուշադրության արժանացնել ազգային տարբերություններին և առանձնահատուկ խնդիրներին, որոնց շարքում են.

- արվեստների և մշակույթի դերը ազգային ինքնության ձեւավորման և զարգացման գործում
- ազգային մշակութային արտադրանքի հանրահռչակումը:

Այս առումով անհրաժեշտ է նշել ՏՄԿԶԿ խմբին հայ շահագրգիռ կողմերի փոխանցած մտահոգությունները Մշակութային ծրագրի վերաբերյալ, հատկապես "խուսափելու համար ԱԳ ավելի մեծ գործընկերների գերիշխանությունից": Սա դիտարկվեց որպես "ավելի փոքր" գործընկերների շահերի վտանգում և անտեսում՝ ի օգուտ ավելի մեծ երկրների:

Թեև Հայաստանի մշակույթի ոլորտի ներկայացուցիչները համակարծիք էին նախորդ երեքից հինգ տարիների ընթացքում երկրում հիմնական մշակութային զարգացումների շուրջ, նշեցին նաև մի շարք երեւույթներ, որ բարելավվել կամ վատթարացել են, մշակութային տիրույթի կամ դրա որեւէ տեղական կամ ազգային մակարդակի ենթաբնագավառի նոր մտահոգությունների պատճառ են դարձել:

Որպես երկրում մշակույթի ոլորտի դրական փոփոխությունների և արդիականացման կարևոր բարենպաստ գործոն՝ Նշվեց մշակույթի բնագավառի բաց լինելը ազգային և միջազգային մակարդակներում բոլոր շահագրգիռ կողմերի միջև ընդգրկուն երկխոսության ու աճող համագործակցության համար: Նշվեցին հետեւյալ դրական փոփոխությունները.

- ազգային մշակութային արտադրանքը արտահանելու մեկնարկը
- կամավոր աշխատանքի և չվճարվող գործունեության ու աջակցության փորձի ներմուծումը երկիր
- մշակութային գործունեության որոշ նոր զարգացումներ, օրինակ՝ փառատոներ (կինո, թատրոն, տպագրություն)

Գնահատելով երկրում մշակութային տիրույթի իրավիճակը՝ տեղացի դերակատարները նշեցին մասնագետների սակավությունը և համապատասխան գիտելիքի պակասը՝ օրինակ՝ մշակույթի կառավարման և ֆոնդերի հայթայթման հմտությունների՝ որպես ոլորտի զարգացման և բարեփոխումների գլխավոր խոչընդոտ:

Հայաստանում մշակութային հասարակական և մասնավոր հատվածների ներկայացուցիչները որպես մշակութային օրենսդրության և քաղաքականության կողմից բարեփոխման արժանի հիմնական կարիքներ նշեցին հետեւյալ խնդիրները, որպեսզի ոլորտը արդիականացման և դրական փոփոխության հնարավորություն ունենա.

- մշակութային և ֆինանսական օրենսդրության բարելավում եվրոպական չափանիշներին համապատասխան, որպեսզի խրախուսվի մշակույթի և համապատասխան ենթաբնագավառների հովանավորչությունն և բարեգործական նախաձեռնությունները, ինչը վերաբերում է նաև թանգարանային գործի, գրքերի տպագրության, ֆիլմարտադրության, ՅՎ-ների և ՄՍԻ-ների պաշտպանության բարելավմանը,
- աջակցություն ազգային մշակույթին՝ խրախուսելով ստեղծարարությունը, առաջ քաշելով նորարար և մշակութային նախաձեռնություններ և զարգացնելով մշակութային զբոսաշրջությունը,
- մշակույթի ոլորտի կառավարման նոր չափանիշների և մոտեցումների ներմուծում՝ հատկապես երաշխավորելու համար մշակույթին առնչվող իրավունքները և բարձրացնելու հանրության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին,
- մշակութային բազմազանության, երկխոսության և հանդուրժողականության խրախուսում,
- բազմակողմանի շփումների, միջազգային գործընկերության և արվեստի ու մշակույթի ոլորտի փորձի փոխանակության ընդլայնում՝ ներառելով միջազգային փորձի փոխանակություն կրթության բնագավառում և մասնակցություն միջազգային համաժողովների և դասընթացների,
- եվրոպական չափանիշների և ժողովրդավարության սկզբունքների ներմուծում մշակույթի ոլորտ:

Հայաստան կատարած ՏՄԿԶԿ-ի հետազոտական այցից հետո կլոր-սեղան քննարկման մասնակիցներին և հանդիպումների մաս կազմած բոլոր տեղացի շահագրգիռ կողմերին առաջարկվեց աջակցել մշակույթի ոլորտի և քաղաքականության ՈԻԹՅՍ վերլուծությանը՝ լրացնելով առցանց հարցաշարը: Վերլուծության մանրամասները ներկայացված են գեկույցի Հավելված 1-ում:

Հայաստանի և մյուս գործընկեր երկրների մշակույթի ոլորտի առաջնահերթ կարիքների, ինչպես նաև մշակութային ծրագրի հաջողության պայմանների վերաբերյալ այլ տեղեկություններ կարելի է գտնել նաև Տարածաշրջանային հետազոտական գեկույցում (Բաժին 4. *ՏՄԿԶԿ-ի հետազոտական այցի գլխավոր բացահայտումները*, Հավելված 3, *Ազգային դերակատարների կողմից մշակութային քաղաքականության և մշակույթի տիրույթի առաջնահերթ կարիքների ՈԻԹՅՍ վերլուծություն*):

Աղբյուրներ

Այս տեղեկատվության համար տե՛ս Ձեկույցի անգլերեն բնօրինակը:

Հավելված 1. Հայաստանի մշակութային քաղաքականության ՈԻԹՅԱ գնահատում տեղական շահագրգիռ կողմերի մասնակցությամբ եւ մշակույթի ոլորտի առաջնահերթ կարիքները

Այս հավելվածի բնօրինակը կարդացեք գեկույցի անգլերեն տարբերակում:

Հավելված 2. Ընդհանուր տեղեկություններ – Հայաստանը պատմության համատեքստում¹

Հայաստանը (հայերեն՝ Հայք կամ Հայաստան) ցամաքով շրջափակված լեռնային երկիր է՝ մոտ 3,249,000 բնակչությամբ, որի 96%-ը էթնիկ հայեր են: Այս առումով այն ըստ երկրային միատարր է: Էթնիկ փոքրամասնությունների թվում են ռուսները, եզդիները, ասորիները, հույները, ուկրաինացիները, հրեաները և քրդերը: Արեւմուտքից Հայաստանը սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արեւելքից Ադրբեջանն է և Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքը, իսկ հարավում՝ Իրանը:

Հայկական թագավորությունը հիմնվել է մոտ Ք.ա. 600 թվականին և իր զագաթնակետին է հասել Տիգրան Մեծի օրոք՝ Ք.ա. 95-66թթ.՝ որպես այդ ժամանակների ամենահզոր տերություն և փոքրիկ կայսրություն: Հետագայում այն հայտնվեց պարսկական կայսրության իշխանության ներքո, որը սկիզբ հանդիսացավ ընդմիջվող անկախության շարունակական բարդ պատմության և տիրապետության կամ արշավանքների համար՝ այդ թվում Ասորեստանի, Հունաստանի, Հռոմի, Բյուզանդիայի, արաբների, մոնղոլների, պարսիկների, Օսմանյան Թուրքիայի և Ռուսաստանի կողմից, ինչպես նաև բազմազան մշակութային ազդեցությունները:

Հայաստանը համարվում է առաջին քրիստոնյա պետությունը, որ ընդունել է Քրիստոնեությունը 301 թվականին: Կրոնն ու քրիստոնեական ավանդույթները դեռ չափազանց կարեւոր են Հայաստանում, ոչ պակաս նաև մշակույթի ոլորտում: Կրոնը, լեզուն և իրենց եզակի այբուբենը հայկական ինքնության մասն են կազմում:

Պատմության ընթացքում փոփոխվող սահմաններով հանդերձ՝ այդ թվում և 387 թվականի բաժանմամբ արեւմտյան և արեւելյան Հայաստանների՝ վերջինիս անկախության պահպանմամբ, 428-ին այն փաստացի դարձավ ճորտատիրական Եմիրություն Արաբական խալիֆայության կազմում մինչև 9-րդ դարը, երբ Բագրատունիների դինաստիայի գլխավորությամբ ձեւավորվեց հայկական անկախ թագավորություն: Այս շրջանն ու անկախությունը ձգվեց մինչև 1045 թվականը, երբ Հայաստանը դարձավ Բյուզանդական կայսրության մի մասը:

1071-ին սելջուկ թուրքերը հաղթեցին Բյուզանդիային, նվաճեցին Հայաստանը, և առաջացավ Սելջուկյան կայսրությունը: Այդ ժամանակ որոշ հայեր տեղափոխվեցին Բյուզանդական տիրապետության ներքո գտնվող Կիլիկիա², որտեղ նրանց ձեւավորվեց իշխանությունը շուտով վերածվեց Կիլիկյան հայկական թագավորության, այստեղ տեղափոխվեց նաև Հայկական առաքելական եկեղեցու նստավայրը: Այս շրջանը կարելի է համարել Հայաստանի երկատման սկզբնադրյալ՝ «պատմական Հայաստանի» և «Սիլիուքի» միջև, որն այսօր էլ այդքան խորը հոգեբանական, քաղաքական ու մշակութային ազդեցություն ունի Հայաստանի վրա: Դեպի Կիլիկիա հայերի հոսքը շարունակվեց նաև 1241թ-ին «պատմական Հայաստան» մոնղոլների ներխուժման հետևանքով: Շրջապատված լինելով մահմեդական պետություններով՝ Կիլիկիան դարձավ քրիստոնեական աշխարհի մի ամրոց Արեւելքում, ինչպես նաև խաչակիրների դաշնակից, որոնք անհաջող փորձեր էին կատարում հայերին լատինական քրիստոնեության տարրեր պարտադրելու համար, թեև 14-րդ դարի երկրորդ կեսին պիտի անկում ապրեին:

Այդ ժամանակ Կիլիկյան թագավորության անկումը կապված էր նաև 14-րդ դարի վերջին եգիպտացի մամլուքների հարձակումների հետ, իսկ հետագայում՝ 15-րդ դարում և 16-րդ դարի սկզբին, Կիլիկիան գրավվեց օսմանյան թուրքերի կողմից: Այս տարածքում հայ բնակչությունը շարունակեց ապրել մինչև 20-րդ դարի սկիզբը և Առաջին աշխարհամարտից հետո իսկապես նախատեսվում էր ստեղծել անկախ հայկական պետություն ֆրանսիական հովանավորության ներքո, ինչը խափանվեց

¹ Այս բաժինը նախատեսված է որպես ընդհանուր տեղեկություններ Հայաստանին կամ դրա պատմական զարգացմանն անձանոթ մարդկանց համար: Այն գրվել է Թերի Սանդելի կողմից՝ հիմնվելով նախկինում իր կատարած աշխատանքի և հետազոտության վրա:

² Կիլիկիան գտնվում էր Միջերկրական ծովի ափին՝ այժմյան հարավ-արեւելյան Թուրքիայի տարածքում

Թուրքիայի անկախության պատերազմի պատճառով:

“Պատմական Հայաստանը” մինչև 16-րդ դարը բաժանված էր հակառակորդներ Սեֆյան Պարսկաստանի եւ Օսմանյան Թուրքիայի միջև: 1820-ականներին ի հայտ եկավ մեկ այլ՝ ռուսական կայսերական տիրապետությունը: 1828 թվականին Օսմանյան Թուրքիան Հայաստանի արեւելյան հատվածը զիջեց Ռուսաստանին, եւ այն մնաց Ռուսական կայսրության նահանգ մինչև դրա անկումը:

Օսմանյան տիրապետության ներքո գտնվող հայերը հաճախ բարգավաճում էին եւ համեմատական ինքնավարություն ունեին իրենց անկախներում: Սակայն Օսմանյան կայսրության վերջին տարիներին բարեփոխումների պահանջները անսկազուրկ էին մնում, նաեւ այլ խնդիրներ ծագեցին՝ այդ թվում այն, որ Թուրքիան անվստահություն էր տածում իր հայ քաղաքացիների նկատմամբ, ովքեր ավելի ու ավելի էին ընկալվում որպես Օսմանյան Թուրքիայի թշնամի Ռուսաստանին հարող: 19-րդ դարում Ռուսական կայսրությունում բնակվող հայերը նույնպես հաճախ բարգավաճում են եւ զարգացումներ էին գրանցում տարբեր բնագավառներում: Պետք է նշել, որ մեծ թվով հայեր բնակվում էին, օրինակ, Կովկասի մշակութային մայրաքաղաք Թիֆլիսում (Թբիլիսի) կամ ամբարտանական մայրաքաղաք Բաքվում:

19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության վերջնական անկումով վատթարացավ հայերի վիճակը, ինչը հանգեցրեց 1915 թվականի դեպրեզիոն, որ անվանվում են “Հայոց Ցեղասպանություն”, հայոց ազգային պատմության սարսափելի եւ սպիացած մի դրվագ, որով էլ մինչև օրս պայմանավորվում է Հայաստանի հոգեբանական եւ քաղաքական աշխարհայացքը:

1918 թվականին Ռուսական կայսրության Հայկական նահանգը հռչակեց իր անկախությունը՝ որպես Հայաստանի ժողովրդավարական հանրապետություն, բայց հարձակման ենթարկվեց թուրքերի, իսկ 1920-ին գրավվեց բոլշևիկների կողմից ու դադարեց գոյություն ունենալ: 1922-ին այն միացվեց Վրաստանին եւ Ադրբեջանին՝ կազմելով Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, եւ գոյատևեց մինչև 1936-ի Խորհրդային սահմանադրության փոփոխությունը, որով Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանը դարձան առանձին Խորհրդային հանրապետություններ:

1980-ականներին Խորհրդային Միությունում կատարված փոփոխությունները, ինչպես նաեւ ազգայնական զգացումները հանգեցրեցին անկախության շարժման եւ լարվածությունների հարեւան Խորհրդային Ադրբեջանի հետ նրա ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի շուրջ: Լեռնային Ղարաբաղն ուներ մեծամասնություն կազմող հայ բնակչություն ու Խորհրդային Հայաստանի հետ միավորվելու շարժում: Լարվածությունները դրսևորվեցին լուրջ էթնիկ բախումներով՝ այդ թվում 1988-ին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում: Ռազմական գործողությունները շարունակվեցին 1988-1994թթ.՝ 1992-ին վերածվելով մեծամասշտաբ կռվի: Հաշվարկների համաձայն՝ այդ ընթացքում տեղահանվել է մոտ մեկ քառորդ միլիոն հայ եւ մոտ 800.000 ադրբեջանցի: Թեւ 1994-ին կնքվել է խաղաղության պայմանագիր, Լեռնային Ղարաբաղում իրավիճակը դեռ վճռված չէ, ինչպես եւ լուծված չեն տարածքային խնդիրները, թեւ բանակցություններ են ընթանում՝ մինչև այժմ անհաջող, եւ՛ր Կ Միևակի խմբի խոսվանու ներքո, որը ղեկավարում են Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը եւ Միացյալ Նահանգները:

1990 թվականի օգոստոսին Հայաստանը դարձավ առաջին ոչ բալթյան պետությունը, որ դուրս եկավ Խորհրդային Միության կազմից, եւ անկախությունը ճանաչվեց 1991-ին անցկացված հանրաքվեով՝ Խորհրդային Միության պաշտոնական փլուզումից երեք ամիս առաջ: Հայաստանի Հանրապետության սահմանադրությունն ընդունվել է 1995 թվականին հանրաքվեով եւ 2005-ին բարեփոխվել՝ կրկին հանրաքվեով: